



Հաշմանդամություն ունեցող անձանց
իրավունքների մասին կոնվենցիա

Distr.: General

25 նոյեմբերի 2016

Բնօրինակը՝ անգլերեն

Ոչ պաշտոնական

Թարգմանություն

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով կոմիտե

Ընդհանուր մեկնաբանություն 4 (2016) ներառական կրթության
մասին

I. Ներածություն

1. Հաշմանդամություն ունեցող մարդիկ՝ պատմականորեն դիտվելով որպես սոցիալական ապահովության շահառուներ, այժմ միջազգային իրավունքով ճանաչված են որպես իրավունքների կրողներ՝ ունենալով առանց խտրականության և հավասար հնարավորությունների հիման վրա կրթության իրավունք: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (1989), Բոլորի համար կրթության մասին համաշխարհային հռչակագիրը (1990), Հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավորությունների հավասարեցման ստանդարտ կանոնները (1993) և Սալամանկայի հռչակագիրը և գործողությունների շրջանակը (1994) ներառում են միջոցներ՝ վկայելով հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի վերաբերյալ աստիճանաբար աճող իրազեկումը և ընկալումը:

2. Դիտարկվելով որպես կրթության իրավունքի նվաճման լավագույն միջոց՝ ներառականության ճանաչումը նոր թափ է ստացել վերջին 30 տարում և ամրագրվել է Հաշմանդամություն ունեցող

GE.16-20881(E)

1620881

Please recycle

Խնդրում ենք վերամշակել:



անձանց իրավունքների մասին կոնվենցիայով (այսուհետ՝ կոնվենցիա), որը որակյալ ներառական կրթության գաղափարը վկայակոչող առաջին իրավական պարտադիր գործիքն է:

Կայուն զարգացման նպատակ 4-ը ևս հաստատում է ներառական, որակյալ և արդար կրթության արժեքը: Ներառական կրթությունը կենտրոնական դեր ունի բոլոր սովորողների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող սովորողների համար բարձրորակ կրթության նվաճման և ներառական, խաղաղ և արդար հասարակության զարգացման հարցում: Բացի այդ, այն ունի հզոր կրթական, սոցիալական և տնտեսական հիմնավորում: Ինչպես արտացոլված է ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի գրասենյակի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթության իրավունքի վերաբերյալ թեմատիկ ուսումնասիրությունում միայն ներառական կրթությունը կարող է հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել և՛ որակյալ կրթություն, և՛ սոցիալական զարգացում և երաշխավորել կրթության իրավունքի համընդհանրություն և անխտրականություն:¹

3. Չնայած ձեռք բերված առաջընթացին, ինչևէ, Կոմիտեն մտահոգված է, որ դեռևս խորը խնդիրներ կան: Շարունակվում է մերժվել հաշմանդամություն ունեցող միլիոնավոր մարդկանց կրթության իրավունքը, էլ ավելի շատերի համար կրթությունը հասանելի է միայն հաստատություններում, որտեղ հաշմանդամություն ունեցող մարդիկ մեկուսացած են իրենց հասակակիցներից և ուր կրթությունը ավելի ցածր որակ ունի:

4. Արգելքները, որոնք խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը ներառական կրթություն, կարող են վերագրվել բազմաթիվ գործոնների, այդ թվում՝

¹ Տե՛ս A/HRC/25/29 և Corr.1, պարբ. 3 և 68:

(ա) Հաշմանդամության մարդու իրավունքների (համաձայն որի՝ ավելի շատ համայնքի և հասարակության արգելքներն են բացառում հաշմանդամություն ունեցող անձանց, քան անձնական խանգարումները) մոդելն ընկալելու և իրականացնելու ձախողմանը,

(բ) Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ շարունակական խտրականությանը, այդ թվում՝ երկարատև բնակելի հաստատություններում պահվող անձանց մեկուսացմանը, և մեյնսթրիմ միջավայրերում գտնվող անձանց նկատմամբ ցածր ակնկալիքներին, ինչի պատճառով նախապաշարմունքներն ու վախերը ուժեղանում են և մնում անփոփոխ,

(գ) Ներառական և որակյալ կրթության և բոլորի համար ուսման մեջ բազմազանության բնույթի և առավելությունների, ներառյալ համապատասխան մրցունակության մասին գիտելիքների բացին, բոլոր ծնողների շրջանում իրազեկման բացակայությանը և աշակցության պահանջներին համապատասխան արձագանքի բացակայությանը, որոնք հանգեցնում են անտեղի վախերի և կարծրատիպերի, որ ներառումը կնպաստի որակյալ կրթության վատթարացմանը կամ կունենա բացասական ազդեցություն մյուսների վրա,

(դ) Ապախոշորացված տվյալների և հետազոտությունների բացակայությանը (երկուսն էլ անհրաժեշտ են հաշվետվողականության և ծրագրերի մշակման համար), որոնք խոչընդոտում են ներառականությունը և որակյալ կրթությունը խթանող արդյունավետ քաղաքականությունների և միջամտությունների մշակմանը,

(ե) Ներառական կրթության իրականացման քաղաքական կամքի, տեխնիկական գիտելիքների և կարողության բացակայությանը, ներառյալ ուսուցչական անձնակազմի ոչ բավարար կրթությանը,

(դ) Հաշմանդամություն ունեցող ուսանողների ներառման համար խրախուսման միջոցների և խելամիտ հարմարեցումների տրամադրման ֆինանսավորման ոչ պատշաճ և անբավարար ֆինանսավորման մեխանիզմներին, միջնախարարական համակարգմանը, աջակցությանը և կայունությանը,

(է) Իրավական միջոցների և խախտումների համար փոխհատուցում պահանջելու մեխանիզմների բացակայությունը:

5. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն Կոնվենցիայի հիմնական ընդհանուր սկզբունքները ներառական կրթության իրականացման համար ձեռնարկված բոլոր միջոցառումներում և պետք է ապահովեն, որ թե՛ ներառական կրթության համակարգի մշակման գործընթացը, և թե՛ արդյունքները համապատասխանում են հոդված 3-ին:

6. Սույն ընդհանուր մեկնաբանությունը կիրառել է փաստացի հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձ ընկալվող բոլոր անձանց դեպքում:² Կոմիտեն ճանաչում է, որ որոշ խմբերի դեպքում կրթությունից բացառվելն ավելի ուսկային է, քան մյուսների դեպքում, ինչպիսիք են՝ մտավոր կամ բազմակի հաշմանդամություն ունեցող անձինք, կույր ու խուլ անձինք, անձինք, որոնք աուտիզմ ունեն կամ հայտնվել են արտակարգ հումանիտար իրավիճակներում:

7. Հոդված 4-ի 3-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է խորհրդակցեն և ակտիվորեն ներառեն հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին, իրենց ներկայացնող կազմակերպությունների միջոցով, ներառական կրթության քաղաքականությունների նախագծման,

² Հոդված 1 (2), Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա.

իրականացման, մոնիտորինգի և գնահատման բոլոր փուլերում: Հաշմանդամություն ունեցող մարդիկ և, երբ նպատակահարմար է, նրանց ընտանիքի անդամները, պետք է ճանաչվեն որպես գործընկերներ, և ոչ միայն կրթության շահառուներ:

II. Հոդված 24-ի նորմատիվ բովանդակությունը

8. Հոդված 24-ի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրականացումը ներառական կրթության համակարգի միջոցով բոլոր մակարդակներում (ներառյալ նախադպրոցական, հիմնական, երկրորդային և երրորդային կրթությունը, վերապատրաստման դասընթացները և ցկյանս ուսումնառությունը, արտածրագրային և սոցիալական գործողությունները) բոլոր ուսանողների համար, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց առանց խտրականության և մյուսների հետ հավասար հիմունքներով:

9. Ներառական կրթության իրավունքի ապահովումը հանգեցնում է մշակույթի, քաղաքականության և գործելակերպի վերափոխմանը՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական բոլոր միջավայրերում՝ համապատասխանեցնելու դրանք առանձին ուսանողների տարբեր պահանջմունքներին և ինքնություններին, այդ հնարավորությունը խոչընդոտող արգելքների վերացման հետ միասին: Այն ներառում է կրթական համակարգի կարողությունների հզորացում՝ հասանելի դառնալու բոլոր սովորողներին: Այն կենտրոնանում է լիարժեք և արդյունավետ մասնակցության, մատչելիության, հաճախելիության և բոլոր ուսանողների նվաճումների վրա, հատկապես նրանց, որոնք տարբեր պատճառներով բացառվում են կամ մարգինալացման ռիսկի խմբում են: Ներառումը ենթադրում է առանց խտրականության բարձրորակ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության հասանելիություն և

դրանում առաջընթաց: Ներառումն ուղղված է համայնքներին, համակարգերին՝ պայքարելու խտրականության դեմ, ներառյալ միասակար կարծրատիպերի դեմ, ճանաչելու բազմազանությունը, նպաստելու մասնակցությունը և հաղթահարելու ուսուցման և մասնակցության խոչընդոտները բոլորի համար՝ կենտրոնանալով հաշմանդամություն ունեցող ուսանողների բարեկեցության ու հաջողության վրա: Այն պահանջում է կրթական համակարգերի օրենսդրության, քաղաքականության և ֆինանսավորման, կառավարման, նախագծման, առաքման և կրթության մոնիտորինգի մեխանիզմների խորքային ձևափոխում:

10. Ներառական կրթությունը պետք է հասկանալ որպես՝

(ա) Բոլոր սովորողների հիմնական իրավունք: Հատկանշական է, կրթությունը հանդիսանում է սովորողի անհատական իրավունքը, և ոչ թե, երեխաների դեպքում, ծնողի կամ խնամակալի իրավունքը: Այս առումով՝ ծնողական պարտականությունները ենթակա են երեխայի իրավունքներին:

(բ) Սկզբունք, որը արժևորում է բոլոր ուսանողների բարեկեցությունը, հարգում է իրենց բնորոշ արժանապատվությունը և ինքնուրույնությունը, ընդունում է անհատների պահանջմունքները և նրանց կարողությունները՝ արդյունավետորեն ներառվելու և նպաստելու հասարակությանը,

(գ) Մարդու այլ իրավունքների իրականացման միջոց: Դա նախնական միջոցն է, որով հաշմանդամություն ունեցող անձինք կարող են իրենց դուրս բերել աղքատությունից, ձեռք բերել միջոցներ լիարժեքորեն մասնակցելու իրենց համայնքներին և պաշտպանվեն

շահագործումից:³ Այն նաև ներառական հասարակությանը հասնելու հիմնական միջոցն է:

(դ) Կրթության իրավունքին խոչընդոտող արգելքները վերացնելու շարունակական և ակտիվ հանձնառության գործընթացի արդյունք (սովորական դպրոցների մշակույթի, քաղաքականության և պրակտիկայի փոփոխությունների հետ միասին)՝ համապատասխանելով և արդյունավետորեն ներգրավելով բոլոր ուսանողներին:

11. Կոմիտեն ընդգծում է բացառման, սեգրեգացիայի, ինտեգրման և ներառման տարբերությունները: Բացառումը տեղի է ունենում, երբ ուսանողները ուղղակիորեն կամ անուղղակիորեն ցանկացած կերպ զրկվում են կամ մերժվում կրթությունից: Սեգրեգացիան տեղի է ունենում, երբ հաշմանդամություն ունեցող ուսանողների կրթությունը ապահովվում է հաշմանդամություն չունեցող ուսանողներից առանձնացված միջավայրերում, որոնք նախագծված են կամ կիրառվում են որոշ կամ տարբեր խանգարումների համար: Ինտեգրումը հաշմանդամություն ունեցող անձանց՝ գոյություն ունեցող մեյնսթրիմ կրթական հաստատություններում տեղավորելու գործընթացն է՝ այն գիտակցումով, որ նրանք կարող են հարմարվել այդ հաստատությունների ստանդարտացված պահանջներին:⁴ Ներառումն ընդգրկում է համակարգային բարեփոխումների գործընթաց, որն իրենից ներկայացնում է բովանդակության, ուսումնական մեթոդների, մոտեցումների, կառուցվածքների և կրթական ռազմավարությունների փոփոխություններ և շտկումներ՝ հաղթահարելու խոչընդոտները այն տեսլականով, որ բոլոր ուսանողի

³ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ընդհանուր մեկնաբանություն 13 (1999) կրթության իրավունքի վերաբերյալ:

⁴ Տե՛ս A/HRC/25/29 և Corr.1, պարբ. 4, և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը. Ներառական կրթության իրավահեն մոտեցում (ժնև, 2012):

համար կապահովվի նրանց տարիքային խմբին համապատասխան արդար և մասնակցային ուսման փորձառություն և միջավայր, որն առավելագույնս համապատասխանում է նրանց պահանջներին և նախասիրություններին: Մեյնսթրիմ դասարաններում հաշմանդամություն ունեցող ուսանողներին տեղավորելն առանց կառուցողական փոփոխությունների, օրինակ՝ կազմակերպման, ծրագրերի և ուսուցման և սովորելու ռազմավարությունների, չի համարվում ներառում: Բացի այդ, ինտեգրումը ինքնաբերաբար չի երաշխավորում սեգրեգացիայից ներառման անցումը:

12. Ներառական կրթության հիմնական տարրերն են՝

(ա) Համակարգային մոտեցում՝ կրթության նախարարությունները պետք է ապահովեն, որ բոլոր ռեսուրսները ներդրված են ներառական կրթության առաջխաղացման և ինստիտուցիոնալ մշակույթի, քաղաքականությունների և գործելակերպերի ներդրման և ամրապնդման համար:

(բ) Ընդհանուր կրթական միջավայր՝ կրթական հաստատությունների առաջնորդների նվիրումը կարևոր է բոլոր մակարդակներում և բոլոր ոլորտներում ներառական կրթության հասնելու նպատակով անհրաժեշտ մշակույթը, քաղաքականությունը և պրակտիկան ներդնելու և ամրապնդելու համար, ներառյալ դասարանում դասավանդման և հարաբերությունների, խորհրդի նիստերի, ուսուցիչների վերահսկողության, խորհրդատվական ծառայությունների և բժշկական խնամքի, դպրոցական ուղևորությունների, բյուջետային հատկացումների, ցանկացած փոխհամագործակցության դեպքում, որը կապ ունի հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ծնողների և, երբ անհրաժեշտ է, տեղական համայնքի կամ լայն հասարակության հետ:

(C) Անձի ամբողջականության վրա հիմնված մոտեցում - յուրաքանչյուր անձի սովորելու կարողության հանաչում և բարձր ակնկալիքներ բոլոր սովորողներից, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող սովորողներից: Ներառական կրթությունն առաջարկում է հկուն ծրագիր և ուսուցման և ուսումնառության մեթոդներ՝ համապատասխանեցված տարբեր ուժերի, պահանջմունքների և ուսումնառության ոճերի: Այս մոտեցումը ենթադրում է աջակցություն, խելամիտ հարմարեցումներ և վաղ միջամտություն, որպեսզի բոլոր սովորողները կարողանան օգտագործել իրենց ներուժը: Ուսուցման գործողությունները մշակելիս ուշադրությունը կենտրոնացած է սովորողների ունակությունների և ձգտումների վրա, այլ ոչ թե բովանդակության:

Անձի ամբողջականության վրա հիմնված մոտեցման նպատակն է վերջ դնել կրթության ոլորտում սեգրեգացիային՝ ապահովելով ներառական դասարանային ուսուցում մատչելի կրթական միջավայրում համապատասխան աջակցությամբ: Կրթական համակարգը պետք է տրամադրի անհատականացված մոտեցում, քան թե ակնկալի ուսանողներից հարմարում համակարգին:

(d) Աջակցություն ստացող ուսուցիչներ — բոլոր ուսուցիչները և անձնակազմի մյուս անդամները ստանում են անհրաժեշտ կրթություն և վերապատրաստումներ, որոնք տալիս են ներառական կրթական միջավայրը հարմարեցնելու հիմնական արժեքները և իրավունակությունը, որն ընդգրկում է հաշմանդամություն ունեցող ուսուցիչներին: Ներառական մշակույթն ապահովում է մատչելի և աջակցող միջավայր, որը խրախուսում է համագործակցությամբ աշխատանքը, շփումները և խնդիրների լուծումը:

(e) Բազմազանության նկատմամբ հարգանքը և արժեքի գիտակցումը — Կրթական համայնքի բոլոր անդամները պետք է

հավասարապես ողջունվեն և հարգվեն չնայած հաշմանդամությանը, ռասային, մաշկի գույնին, սեռին, լեզվին, լեզվական մշակույթին, կրոնին, քաղաքական կամ այլ համոզմունքներին, ազգային, էթնիկ, բնիկ կամ սոցիալական ծագմանը, գույքին, ծննդի, տարիքին կամ այլ կարգավիճակին: Բոլոր ուսանողները պետք է իրենց զգան արժևորված, հարգված, այդ թվում լսված: Արդյունավետ միջոցներ պետք է ձեռնարկվեն կանխելու բռնությունը և բուլիինգը: Ներառումը անհատական մոտեցում է ցուցաբերում ուսանողների նկատմամբ:

(f) Ուսումնառության համար բարենպաստ միջավայր - Ներառական կրթական միջավայրերը մատչելի միջավայրեր են, որտեղ բոլորն իրենց զգում են ապահով, իրենց նկատմամբ աջակցություն և խրախուսում են զգում, կարողանում են արտահայտվել, և որտեղ դպրոցական համայնք ստեղծելու գործում ուսանողներին ներգրավելու մասին ազդեցիկ շեշտադրում կա: Ճանաչվում է կրթությունում հավասարակիցների խմբերի, դրական հարաբերություններ կառուցելու, ընկերության և ընդունման կարևորությունը:

(g) Արդյունավետ անցում - Հաշմանդամություն ունեցող սովորողները ստանում են աջակցություն՝ ապահովելու անցումը դպրոցից մասնագիտական կրթության և երրորդային կրթություն և, վերջապես, աշխատանք: Սովորողների կարողություններն ու վստահությունը զարգացած են և սովորողները ստանում են խելամիտ հարմարեցումներ, գնահատման և քննությունների գործընթացում նրանց վերաբերվում են հավասար և նրանց կարողությունները և ձեռքբերումները հավաստվում են մյուսների հետ հավասար հիմունքներով:

(h) Համագործակցության ճանաչումը - Ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցիչների ասոցիացիաները, ուսանողական ասոցիացիաները և

Ֆեդերացիաները, հաշմանդամություն ունեցող մարդկանց կազմակերպությունները, դպրոցների խորհուրդները, ծնողների և ուսուցիչների ասոցիացիաները և դպրոցներում գործող այլ աջակցության խմբերը պետք է խրախուսվեն՝ զարգացնելու հաշմանդամության մասին ընկալումները և գիտելիքները: Ծնողների կամ խնամակալների և համայնքի ներգրավումը դիտվում է որպես աջակցող հանգամանք, որը նպաստում է ռեսուրսներին և ուժերին: Կրթական միջավայրի և լայն հասարակության միջև հարաբերությունները պետք է ճանաչվեն որպես ներառական հասարակության ուղի:

(i) Մոնիտորինգ – Որպես շարունակական գործընթաց, ներառական կրթությունը պետք է կանոնավոր կերպով մոնիտորինգի և գնահատման ենթարկվի՝ ապահովելու, որ չկա ֆորմալ կամ ոչ ֆորմալ սեգրեգացիա կամ ինտեգրացիա: Համաձայն հոդված 33-ի մոնիտորինգը պետք է ընդգրկի հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաներին և ինտենսիվ աջակցության կարիք ունեցող անձանց, ներկայացուցիչ կազմակերպություններին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների կամ խնամակալների միջոցով, երբ անհրաժեշտ է: Հաշմանդամություն առումով ներառականության ցուցիչները պետք է մշակվեն և կիրառվեն Կայուն զարգացման օրակարգ 2030-ին համապատասխան:

13. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիայի և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 24-ի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ապահովեն կրթության իրավունքի իրականացումը առանց խտրականության և հնարավորությունների հավասարության հիման վրա: Մասնակից

պետությունները պետք է արգելեն հաշմանդամության հիմքով խտրականության բոլոր ձևերը և հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց երաշխավորեն խտրականությունից բոլոր հիմքերով հավասար և արդյունավետ պաշտպանությամբ: Հաշմանդամություն ունեցող մարդիկ կարող են ունենալ հատվող խտրականության փորձառություն հաշմանդամություն, գենդերի, կրոնի, իրավական կարգավիճակի, էթնիկ ծագման, տարիքի, սեռական կողմնորոշման կամ լեզվի հիմքով: Բացի այդ, ծնողները, նրանց մյուս զավակները կամ այլ հարազատները կարող են ենթարկվել հաշմանդամության հիմքով ասոցիատիվ խտրականության: Խտրականության բոլոր ձևերին ուղղված անհրաժեշտ միջոցները ներառում են ուսումնական հաստատություններում և համայնքում առկա իրավական, ֆիզիկական, հաղորդակցական և լեզվական, սոցիալական, ֆինանսական և վերաբերմունքային խոչընդոտների նույնականացում և հեռացում: Անխտրականության իրավունքը ներառում է առանձնացված շլինելու և խելամիտ հարմարեցմամբ ապահովվելու իրավունքները, և պետք է հասկանալ մատչելի կրթական միջավայրի և խելամիտ հարմարեցման ապահովման պարտականությունների համատեքստում:

14. Զինված հակամարտությունների, հումանիտար արտակարգ իրավիճակների և բնական աղետների իրավիճակները անհամաչափ ազդեցություն են ունենում ներառական կրթության իրավունքի վրա: Մասնակից պետությունները պետք է ընդունեն աղետների ռիսկի նվազեցման ներառական համալիր ռազմավարություններ արտակարգ իրավիճակներում դպրոցական ամբողջական ապահովության և անվտանգության համար, որոնք զգայուն են հաշմանդամություն ունեցող սովորողներ համար: Նման համատեքստում ժամանակավոր կրթական միջավայրը պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող անձանց, մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների

կրթությունը մյուսների հետ հավասար հիմունքներով: Դրանք պետք է ներառեն մատչելի կրթական նյութեր, տարածքներ, խորհրդատվություն և տեղի ժեստերի լեզվի թրեյնինգի հնարավորություն խուլ սովորողների համար: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 11-ի համաձայն և հաշվի առնելով նման հաստատություններում սեռական բռնության բարձր ռիսկը՝ պետք է ձեռնարկվեն միջոցներ ապահովելու համար, որ կրթական միջավայրը անվտանգ է և մատչելի հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին: Հաշմանդամություն ունեցող սովորողները չպետք է մերժվեն կրթական հաստատություններում սովորելու իրավունքից այն հիմնավորմամբ, որ արտակարգ իրավիճակներում նրանց տարհանումը անհնար կլինի, և պետք է տրամադրվեն խելամիտ հարմարեցումներ:

15. Հոդված 24-ի 2-ին մասի 1-ին կետի իրականացման համար և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի համապատասխան կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային ներուժի և արժանապատվության զգացումի և ինքնագնատականի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների և մարդկային բազմազանության նկատմամբ հարգանքի ամրապնդմանը:

Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ կրթությունը համապատասխանի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի նպատակներին և խնդիրներին՝ ինչպես մեկնաբանված են Բոլորի համար կրթության համաշխարհային հռչակագրի (հոդված 1), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (հոդված 29 (1)), Վիեննայի հռչակագրի և գործողությունների ծրագրի (բաժին 1, պարբ. 33 և բաժին 2, պարբ.

80) և ՄԱԿ-ի մարդու իրավունքների կրթության տասնամյակի գործողությունների ծրագրի (պարբ. 2) լույսի ներքո: Այս տեքստերը ներառում են լրացուցիչ տարրեր, ինչպիսիք են հղումները գենդերային հավասարությանը և շրջակա միջավայրի նկատմամբ հարգանքին:⁵ Կրթության իրավունքի ապահովումը հասանելիության և բովանդակության խնդիր է, և ջանքերը պետք է ուղղված լինեն արժեքների լայն շրջանակին, ներառյալ հասկացողության և հանդուրժողականության պահպանմանը:⁶ Ներառական կրթությունը պետք է նպատակաուղղված լինի բոլոր անձանց համար փոխադարձ հարգանքի ու արժեքի խթանմանը և կրթական միջավայրերի կառուցմանը, որտեղ ուսուցման մոտեցումը, ուսուսական հաստատության մշակույթը և ուսուսական ծրագիրը ինքնին արտացոլում են բազմազանության արժեքը:

16. Հոդված 24-ի 1-ին մասի «բ» կետի իրականացման համար կրթությունը պետք է նպատակաուղղված լինի հաշմանդամություն ունեցող անձանց անհատականության, տաղանդի և ստեղծագործականության զարգացմանը, ինչպես նաև նրանց հոգեկան, ֆիզիկական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, նրանց լիարժեք ներուժին: Հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթությունը շատ հաճախ կենտրոնանում է դեֆիցիտային մոտեցման, նրանց փաստացի կամ ընկալվող խանգարման և նրանց ներուժի վերաբերյալ կանխորոշված և բացասական ենթադրություններով սահմանափակման հնարավորությունների վրա: Մասնակից պետությունները պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անհատի

⁵ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն 13:

⁶ Երեխայի իրավունքների կոմիտե, կրթության նպատակների վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություն 1 (2001)

յուրահաստուկ ուժերի և տաղանդի վրա հիմնվելու համար հնարավորությունների ստեղծմանը:

17. Հոդված 24-ի 1-ին մասի «բ» կետի իրականացման համար, կրթության նպատակները պետք է ուղղված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար ազատ հասարակությանը լիարժեք և արդյունավետ կերպով մասնակցելու հնարավորությունների ստեղծմանը: Վկայակոչելով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 23-ի 3-րդ մասը՝ Կոմիտեն հաշմանդամություն ունեցող երեխաների հետ կապված ընդգծում է, որ պետք է տրամադրվի աջակցություն՝ ապահովելու, որ նրանք ունեն կրթության արդյունավետ հնարավորություն՝ նպաստող նրանց առավելագույն հնարավոր սոցիալական ինտեգրմանը և անհատական զարգացմանը: Մասնակից պետությունները պետք է ճանաչեն, որ անհատական աջակցությունը և խելամիտ հարմարեցումները առաջնային խնդիրներն են և պետք է լինեն անվճար կրթության բոլոր մակարդակներում, որոնք պարտադիր են:

18. Հոդված 24-ի 2-րդ մասի «ա» կետի իրականացման համար պետք է արգելվի հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր կրթության համակարգից բացառումը, ներառյալ ցանկացած օրենսդրական կամ կարգավորող դրույթի միջոցով՝ սահմանափակելով նրանց ներառումը խանգարման կամ խանգարման աստիճանի հիմքով, այդ թվում՝ երբ ներառումը պայմանավորված է անհատի ներուժի չափով կամ երբ վկայակոչվում է անհամաչափ կամ անտեղի բեռի մասին՝ խուսափելու համար խելամիտ հարմարեցման պարտավորությունից: Ընդհանուր կրթություն նշանակում է սովորական ուսումնական միջավայրերի բոլոր տեսակներ և կրթության կազմակերպման մարմին: Ուղղակի բացառում կլինի որոշակի աշակերտների դասակարգումը որպես «սովորելու համար ոչ

պիտանի» և, այդ պիտով, կրթություն ստանալու համար անհամապատասխան: Անուղղակի բացառում կլինի ընդհանուր քննության պահանջը որպես դպրոց ընդունվելու պայման՝ առանց խելամիտ հարմարեցումների և աջակցության:

19. Կոնվենցիայի հոդված 24-ի 1-ին մասի «բ» կետի իրականացման համար, մասնակից պետությունները պետք է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, ներառյալ օրենսդրական փոփոխելու կամ ուժը կորցրած ճանաչելու գործող օրենքները, կարգավորումները, սովորույթները և գործելակերպերը, որոնք խտրական են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ և կա հոդված 24-ի խախտում: Անհրաժեշտության դեպքում խտրական օրենքները, կարգավորումները, սովորույթները և գործելակերպերը պետք է վերացվեն կամ փոփոխվեն համակարգված կերպով և չափելի ժամանակահատվածում:

20. Հոդված 24-ի 2-րդ մասի «բ» կետի իրականացման համար հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է հնարավորություն ունենան օգտվելու ներառական, որակյալ և անվճար հիմնական և միջնակարգ կրթությունից և կարողանան սահում անցում կատարել մեկից մյուսը իրենց համայնքում ապրողների հետ հավասար հիմքունքներով: Կոմիտեն, հենվելով Տնտեսական, սոցիալական և մշակութային հարցերով կոմիտեի առաջարկությունների վրա, նշում է, որ այդ պարտավորության կատարման համար կրթական համակարգը պետք է կազմված լինի չորս փոխկապակցված հատկանիշից՝ հասանելիություն, մատչելիություն, ընդունելիություն և ռարմարունակություն:⁷

⁷ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, ընդհանուր մեկնաբանություն 13:

Հասանելիություն

21. Հանրային և մասնավոր կրթական հաստատությունները և ծրագրերը պետք է բավարար թվով և որակով հասանելի լինեն: Մասնակից պետությունները պետք է երաշխավորեն ամբողջ համայնքում հաշմանդամություն ունեցող սովորողների համար կրթական տարածքների լայն հասանելիությունը բոլոր մակարդակներում:

Մատչելիություն

22. Համաձայն Կոնվենցիայի հոդված 9-ի և Կոմիտեի՝ մատչելիության վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություն 2-ի (2014) կրթական հաստատությունները և ծրագրերը պետք է մատչելի լինեն բոլորի համար առանց խտրականության: Մատչելի պետք է լինի ամբողջ կրթական համակարգը, ներառյալ շենքերը, տեղեկատվական և հաղորդակցական գործիքները (ներառյալ շրջապատող կամ հանախականային մոդուլյացիոն աջակցող համակարգերը), ծրագրերը, կրթական նյութերը, ուսուցման մեթոդները, գնահատումները, լեզուն և աջակցության ծառայությունները: Հաշմանդամություն ունեցող ուսանողները միջավայրը պետք է նախագծված լինի այնպես, որ խթանի ներառումը և երաշխավորի նրանց հավասարությունը կրթության ամբողջ ընթացքում:⁸ Օրինակ՝ դպրոցական տրանսպորտը, ջրի և սանիտարական հարմարությունները (ներառյալ հիգիենան և զուգարանները), դպրոցի ճաշարանները, և հանգստի տարածքները պետք է լինեն ներառական, մատչելի և անվտանգ: Մասնակից պետությունները պետք է պարտավորություն ստանձնեն արագ ներդնելու համընդհանուր դիզայնը: Մասնակից պետությունները պետք է արգելեն և պատժամիջոցներ կիրառեն ցանկացած կրթական

⁸ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, ընդհանուր մեկնաբանություն 2:

ենթակառուցվածքի կառուցման դեպքում, որն անմատչելի է և պետք է հիմնեն արդյունավետ մոնիտորինգի մեխանիզմ և ստեղծեն գոյություն ունեցող կրթական միջավայրերը մատչելի դարձնելու ժամանակացույց: Մասնակից պետությունները պետք է նաև պարտավորվեն կրթական միջավայրերում պահանջի դեպքում տրամադրել խելամիտ հարմարեցումներ: Համընդհանուր դիզայնի մոտեցումը չի բացառում աջակցող սարքերի, ծրագրերի և ծրագրային ապահովման տրամադրում հաշմանդամություն ունեցող սովորողներին, որոնք ունեն դրանց կարիքը: Մատչելիությունը դինամիկ գաղափար է, և դրա կիրառումը պահանջում է պարբերական կարգավորում և տեխնիկական ճշգրտումներ: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ ուսմանը նպաստող ինովացիաների արագ զարգացումը և նոր տեխնոլոգիաների նախագծումը մատչելի է բոլոր ուսանողներին, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց:

23. Կոմիտեն ընդգծում է մատչելի ձևաչափերով և լեզուներով, այդ թվում՝ ժեստերի լեզվով, դասագրքերի և ուսումնական նյութերի բացակայությունը, որը լայն տարածում ունի: Մասնակից պետությունները պետք է ներդրումներ կատարեն թանաքով կամ բրայլով և թվային ձևաչափերով ռեսուրսների մշակման համար, այդ թվում՝ ինովացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ: Նրանք պետք է նաև հաշվի առնեն տպագիր նյութերից մատչելի ձևաչափերի և լեզվի փոխակերպման ստանդարտների և ուղեցույցների մշակումը և մատչելիությունը դարձնեն կրթության հետ կապված գնումների կարևոր պայման: Կոմիտեն մասնակից պետություններին կոչ է անում օր առաջ վավերացնել և իրականացնել Մարաքեշի պայմանագիրը՝ դյուրացնելու տպագիր աշխատանքների մատչելիությունը այն անձանց համար, ովքեր կույր են, տեսողության խնդիրներ կամ այլ տպագրական հաշմանդամություն ունեն:

24. Մատչելիությունը պահանջում է, որ կրթությունը բոլոր փոփոխություններում լինի գնային առումով հասանելի հաշմանդամություն ունեցող ուսանողներին: Խելամիտ հարմարեցումները չպետք է հավելյալ ծախս լինեն հաշմանդամություն ունեցող սովորողների համար: Պարտադիր, որակյալ, անվճար և մատչելի առաջնային կրթությունը անհետաձգելի պարտավորություն է: Կայուն զարգացման 2030 օրակարգի համաձայն մասնակից պետությունները պետք է աստիճանաբար ընդունեն միջոցներ, որպեսզի բոլոր երեխաները, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաները ունենան ազատ, արդար և որակյալ միջնակարգ կրթություն, և ապահովեն հաշմանդամություն ունեցող բոլոր կանանց և տղամարդկանց համար գնային առումով հասանելի և որակյալ տեխնիկական, մասնագիտական և երրորդային կրթություն, ներառյալ համալսարանական, և ցկյանս ուսուցում: Մասնակից պետությունները պետք է երաշխավորեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են կրթություն ստանալ հանրային և մասնավոր ակադեմիական հաստատություններում մյուսների հետ հավասար հիմունքներով:

Ընդունելիություն

25. Ընդունելիությունը կրթական բոլոր օբյեկտները, ապրանքները և ծառայությունները նախագծելիս և իրականացնելիս հաշմանդամություն ունեցող մարդկանց պահանջմունքների, մշակույթի, հայացքների և լեզվի նկատմամբ հարգանքի և դրանք հաշվի առնելու պարտավորությունն է: Տրամադրված կրթության ձևն ու բովանդակությունը պետք է ընդունելի լինի բոլորի համար: Մասնակից պետությունները պետք է ընդունեն կառուցողական գործողություններ՝ ապահովելու կրթության որակը բոլորի համար:⁹

⁹ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, ընդհանուր մեկնաբանություն 13:

Ներառումը և որակը փոխկապակցված են. ներառական մոտեցումը կարող է նշանակալից ավանդ ունենալ որակյալ կրթության մեջ:

Հարմարունակություն

26. Կոմիտեն խրախուսում է մասնակից պետություններին ընդունել համընդհանուր դիզայնը որպես ուսուցման մոտեցում, որը բաղկացած է մի շարք սկզբունքներից, որոնք ուսուցիչներին և այլ աշխատակիցներին տալիս են հարմարեցված կրթական միջավայր ստեղծելու կառուցվածքներ և բոլոր սովորողների տարբեր կարիքները բավարարելու համար հրահանգավորման մշակման հնարավորություն: Այն ճանաչում է, որ յուրաքանչյուր ուսանող յուրովի է սովորում և ընդգրկում է սովորելու ճկուն ձևերի մշակումը, գրավիչ դասարանային միջավայրի ստեղծումը, բոլոր ուսանողներից բարձր սպասումների պահպանումը՝ ընձեռելով ակնկալիքները բավարարելու բազմաթիվ ուղիներ, ուսուցիչներին իրենց իսկ ուսուցման մասին այլ կերպ մտածել խրախուսելը, և բոլորի, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց կրթական արդյունքների վրա կենտրոնանալը: Ծրագիրը պետք է մտածվի, նախագծվի և իրականացվի այնպես, որ համապատասխանի և հարմարվի յուրաքանչյուր ուսանողի պահանջներին և ապահովի համապատասխան կրթական «արձագանք»: Ստանդարտացված գնահատումները պետք է փոխարինվեն ճկուն և բազմակի գնահատման ձևերով և ճանաչեն ուսումնառության այլընտրանքային ուղիներ ապահովող ընդհանուր նպատակներին հասնելու անհատական առաջընթացը:

27. Կոմիտեն ցիպի հոդված 24-ի 2-րդ մասի «բ» կետի համաձայն հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է կարողանան հաճախել առաջնային և երկրորդային կրթական հաստատություններ այն համայնքներում, որտեղ ապրում են: Սովորողները չպետք է հեռու ուղարկվեն իրենց տներից: Կրթական միջավայրը պետք է

հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական անվտանգ հասանելիություն ունենալ և ապահովի անվտանգ և ապահով տրանսպորտային միջոցներ, այլապես այն պետք է մատչելի լինի տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներով: Այնուամենայնիվ, մասնակից պետությունները պետք է խուսափեն կրթական միջավայրում հաշմանդամություն ունեցող ուսանողների ուղղակի ներգրավումը, ուսուցիչների հետ փոխգործակցությունը և դերային մոդելները բացառապես տեխնոլոգիաներով փոխարինելուց: Այլ ուսանողների, ներառյալ հաշմանդամություն ունեցող սովորողների քույրերի և եղբայրների հետ ակտիվ մասնակցությունը ներառական կրթության իրավունքի կարևոր բաղադրիչն է:

28. Հոդված 24-ի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է տրամադրեն խելամիտ հարմարեցումներ, որպեսզի անհատ ուսանողներ ունենան կրթություն ստանալու հնարավորություն մյուսների հետ հավասար հիմունքներով: «Խելամտություն» նշանակում է կոնտեքստուալ փորձարկման արդյունք, որը ներառում է համապատասխանության և հարմարեցման արդյունավետության վերլուծություն և խտրականությանը հակազդելու ակնկալվող արդյունք: Անհամաչափ բեռը գնահատելիս հաշվի է առնվում ռեսուրսների առկայությունը և ճանաչվում են ֆինանսական հետևանքները: Խելամիտ հարմարեցման տրամադրման պարտականությունը ենթակա է կատարման խելամիտ հարմարեցման պահանջի պահից:¹⁰ Խելամիտ հարմարեցման քաղաքականությունները պետք է ընդունվեն ազգային, տեղական և կրթական հաստատությունների և կրթության բոլոր մակարդակներում: Աստիճանը, որով խելամիտ հարմարեցումը տրամադրվում է, պետք է հաշվի առնվի ներառական կրթության համակարգի մշակման,

¹⁰ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, ընդհանուր մեկնաբանություն 2:

գոյություն ունեցող ռեսուրսների առավելագույնս օգտագործման և նորերի մշակման ընդհանուր պարտավորությունը: Ներառական կրթության ուղղությամբ առաջընթացի ձախողումը ռեսուրսների բացակայությամբ և ֆինանսական ճգնաժամով արդարացնելը հոդված 24-ի խախտում է:

29. Կոմիտեն կրկնում է ընդհանուր մատչելիության պարտականության և խելամիտ հարմարեցումների պարտավորության միջև տարբերությունը:¹¹ Մատչելիությունը բնակչության խմբերի համար է և այն հիմնված է աստիճանականորեն իրականացվող մի շարք ստանդարտների վրա: Անհամաչափությունը կամ անհիմն բեռը չի կարող նշվել որպես մատչելիության ապահովման ձախողումը պաշտպանելու միջոց: Խելամիտ հարմարեցումը վերաբերում է անհատին և այն լրացնում է մատչելիության պարտականությունը: Անձը կարող է օրինական կերպով պահանջել խելամիտ հարմարեցման միջոցներ, նույնիսկ եթե մասնակից պետությունը կատարել է իր մատչելիության պարտականությունը:

30. Համաչափության սահմանումը անպայմանորեն տարբերվում է ըստ համատեքստից: Հարմարեցումների հասանելիությունը պետք է քննարկվի կրթական ռեսուրսների հասանելիության համատեքստում և չսահմանափակվի ակադեմիական հաստատություններում առկա ռեսուրսներով. պետք է հնարավոր լինի ռեսուրսների փոխանցումը համակարգի շրջանակում: Չկա «մեկ չափսը համապատասխանում է բոլորի» բանաձև խելամիտ հարմարեցումների դեպքում, քանի որ նույն խանգարում ունեցող տարբեր ուսանողներ կարող են պահանջել տարբեր հարմարեցումներ: Հարմարեցումները կարող են ընդգրկել դասասենյակի տեղափոխումը, դասասենյակում հաղորդակցության տարբեր ձևերը, խոշոր տպագրությամբ, նշաններով նյութերի և/կամ

¹¹ Տե՛ս նույն տեղում:

պատկերների առկայությունը կամ ներկայացման նյութերի այլընտրանքային ձևաչափերը, ինչպես նաև ուսանողներին նշումներ կատարողի կամ լեզվի թարգմանչի տրամադրումը կամ հնարավորություն տալը օգտվել աջակցող տեխնոլոգիաներից սովորելու և գնահատման ժամանակ: Ոչ նյութական հարմարեցումների տրամադրումը, ինչպիսիք են հավելյալ ժամանակի տրամադրումը, ֆոնային աղմուկի աստիճանի նվազեցումը (զգայական գերծանրաբեռնվածության զգայունություն), գնահատման այլընտրանքային մեթոդների կիրառումը և ծրագրային տարրի այլընտրանքով փոխարինումը, պետք է հաշվի առնվեն: Ապահովելու համար, որ հարմարեցումները համապատասխանում են ուսանողների պահանջներին, կամքին, նախապատվություններին և ընտրությանը և կարող է իրականացվել հաստատության մատակարարի կողմից, պետք է տեղի ունենան քննարկումներ կրթության պատասխանատուների, մատակարարների, ակադեմիական հաստատությունների, հաշմանդամություն ունեցող ուսանողների, կախված տարիքից և կարողություններից, եթե անհրաժեշտ է նաև ծնողների, խնամակալների կամ ընտանիքի այլ անդամների միջև: Խելամիտ հարմարեցումների տրամադրումը չի կարող պայմանավորված լինել բժշկական ախտորոշումով և պետք է հիմնված լինի կրթության սոցիալական խոչընդոտների գնահատման վրա:

31. Խելամիտ հարմարեցումներ տրամադրել մերժելը խտրականություն է, և խելամիտ հարմարեցումների ապահովումը ենթակա է անհապաղ, այլ ոչ թե աստիճանական կատարման: Մասնակից պետությունները պետք է ապահովեն անկախ համակարգեր, որոնք մշտադիտարկում են հարմարեցումների նպատակահարմարությունը և արդյունավետությունը, և ապահովում են հաշմանդամություն ունեցող ուսանողներին, անհրաժեշտության դեպքում, իրենց ընտանիքներին, փոխհատուցելու համար, երբ

համարում են, որ նրանց բավարար չափով չեն տրամադրվել հարմարեցումներ կամ ենթարկվել են խտրականության: Խտրականության ենթարկված անձանց վիկտիմիզացիայից պաշտպանությունը փոխհատուցման գործընթացում կարևոր է:

32. 24-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի իրականացման համար, հաշմանդամություն ունեցող ուսանողները պետք է ստանան անհրաժեշտ աջակցությունը՝ դյուրացնելու իրենց արդյունավետ կրթությունը և հնարավորություն ընձեռելու օգտագործել իրենց ներուժը մյուսների հետ հավասար հիմունքներով: Աջակցությունը կրթական համակարգի շրջանակում ծառայությունների և օբյեկտների ընդհանուր հասանելիության առումով պետք է ապահովի, որ հաշմանդամություն ունեցող սովորողները կարողանան օգտագործել իրենց ներուժը հնարավոր առավելագույն չափով, ներառյալ, օրինակ, բավականաչափ վերապատրաստված և աջակցություն ստացող ուսուսանական անձնակազմի, դպրոցական խորհրդատուների, հոգեբանների և այլ համապատասխան առողջապահական և սոցիալական ծառայությունների մասնագետների, ինչպես նաև կրթաթոշակների և ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովման միջոցով:

33. Հոդված 24-ի 2-րդ մասի «զ» կետի իրականացման համար, պետք է անմիջականորեն տրամադրվի համարժեք, շարունակական և անհատականացված աջակցություն: Կոմիտեն ընդգծում է անհատականացված կրթական պլանների տրամադրման անհրաժեշտությունը, որոնք կարող են նույնականացնել առանձին ուսանողների կողմից պահանջվող խելամիտ հարմարեցումները և հստակ աջակցությունը, ներառյալ աջակցող փոխհատուցումը, այլընտրանքային/մատչելի ձևաչափերով կոնկրետ ուսուսանական նյութերը, հաղորդակցության եղանակները և միջոցներ,

հաղորդակցության աջակցող միջոցները և աջակցող և տեղեկատվական տեխնոլոգիաները: Աջակցությունը կարող է ներառել նաև որակավորված օգնականների ծառայությունների մատուցում, որոնք կաջակցեն նրանց ուսմանը՝ աշխատելով մի խումբ ուսանողների կամ անհատների հետ՝ կախված ուսանողների պահանջներից: Նման ծրագրերի արդյունավետությունը պետք է պարբերաբար մշտադիտարկվի և գնահատվի սովորողների անմիջական ներգրավմամբ: Նման աջակցության բնույթը պետք է որոշվի ուսանողների հետ համագործակցությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում ծնողների, խնամակալների և այլ երրորդ կողմի հետ: Սովորողը պետք է ունենա բողոքարկման մեխանիզմներ, եթե աջակցությունը անհասանելի է կամ անբավարար:

34. Ցանկացած աջակցության միջոց պետք է համապատասխանի ներառման նպատակին: Համապատասխանաբար, դրանք պետք է նախագծված լինեն հաշմանդամություն ունեցող սովորողների հնարավորությունների ամրապնդման համար՝ իրենց հասակակիցների հետ միասին դասարանում և արտադպրոցական գործողություններին մասնակցելու, այլ ոչ թե մարգինալացման նպատակով:

35. 24-րդ հոդվածի 3-րդ մասի կապակցությամբ բազմաթիվ պետություններ չեն կարողանում հաշմանդամություն ունեցող անձանց, մասնավորապես աուտիզմի սպեկտրի անձանց, հաղորդակցման խանգարումներ և զգայական հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել աջակցություն իրենց համայնքներում ձեռք բերելու կրթությունում և համայնքում մասնակցելու համար կյանքի, լեզվի և սոցիալական հմտություններ:

(ա) Կույր և թույլ տեսողություն ունեցող ուսանողները պետք է ունենան բրայլի, այլընտրանքային սկրիպտերի ուսուցման, հաղորդակցության լրացուցիչ և այլընտրանքային եղանակների,

միջոցների և ձևաչափերի, ինչպես նաև կողմնորոշման և շարժունության հմտությունների հնարավորություն: Պետք է աջակցել ուսումը դյուրացնող համապատասխան տեխնոլոգիաների և այլընտրանքային հաղորդակցության համակարգերի հասանելիության ապահովմանն ուղղված ներդրումներին: Պետք է ներդնել հավասարակիցների աջակցության և մենթորային համակարգեր և նպաստել դրանց:

(բ) Խուլ և թույլ լսող ուսանողներին պետք է տրվի ժեստերի լեզու սովորելու հնարավորություն և պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ ճանաչելու և խթանելու խուլ համայնքի լեզվական ինքնությունը: Կոմիտեն հրավիրում է այն պետությունների ուշադրությունը, որոնք մասնակից են Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիային, որը հաստատում է երեխաների՝ իրենց մայրենի լեզվով ուսուցման իրավունքը, և հիշեցնում է մասնակից պետություններին, որ հոդված 30-ի 4-րդ կետը պահանջում է ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ մշակութային և լեզվական ինքնությունը, ներառյալ ժեստերի լեզվի և խուլերի մշակույթը, և աջակցել մյուսների հետ հավասար հիմունքներով: Բացի այդ, թույլ լսող ուսանողները պետք է ունենան խոսքի թերապիայի որակյալ ծառայությունների, ինդուկցիոն հանգույցի և ձայնագրերի հասանելիություն:

(գ) Կույր, խուլ կամ կույր և խուլ ուսանողներին պետք է հնարավորություն ընձեռվի կրթություն ստանալ անձի համար առավել համապատասխան լեզուներով և հաղորդակցության եղանակներով և միջոցներով այնպիսի միջավայրում, որն առավելագույնս կնպաստի անձնական, ակադեմիական և սոցիալական զարգամացմանը ֆորմալ դպրոցական համակարգում և դրանից դուրս: Կոմիտեն ընդգծում է, որ ներառական նման միջավայրերի առկայության համար մասնակից

պետությունները պետք է տրամադրեն պահանջվող աջակցությունը, ներառյալ ռեսուրսները, աջակցող տեխնոլոգիաներ և կողմնորոշման ու շարժունությունների հմտություններ:

(դ) Հաղորդակցության խանգարումներ ունեցող ուսանողները պետք է հնարավորություն ունենալ ինքնաարտահայտվել և սովորել, թե ինչպես կարելի է կիրառել այլընտրանքային կամ լրացուցիչ հաղորդակցությունը: Այն կարող է ներառել ժեստերի լեզվի, ցածր կամ բարձր տեխնոլոգիական հաղորդակցության միջոցների կամ հաղորդակցության գրքերի ապահովում: Մասնակից պետությունները պետք է ներդրումներ կատարեն փորձագիտության, տեխնոլոգիաների և ծառայությունների զարգացման համար՝ նպաստելու ուսուցումը դյուրացնող անհրաժեշտ տեխնոլոգիաների և այլընտրանքային հաղորդակցության համակարգերին:

(ե) Սոցիալ-հաղորդակցության դժվարություններ ունեցող սովորողները պետք է շտկումների միջոցով ստանան աջակցություն (ներառյալ զույգերով աշխատանքը, հավասարակիցների ուսուցումը, ուսուցչին մոտ նստելը և համակարգված ու կանխատեսելի միջավայրի ստեղծումը) դասարանում դասի կազմակերպման ժամանակ:

(զ) Մտավոր խանգարումներ ունեցող աշակերտները պետք է ապահովված լինեն ապահով, հանգիստ և համակարգված ուսումնական միջավայրում կոնկրետ, դիտարկելի/վիզուալ և հեշտ ընթերցվող ուսուցմամբ և ուսումնական նյութերով՝ ուղղված այն ունակություններին, որոնք լավագույնս նախապատրաստում են ուսանողներին անկախ ապրելուն և մասնագիտական գործունեությանը: Մասնակից պետությունները պետք է ներդրումներ կատարեն այլընտրանքային ուսումնական ռազմավարությունների և գնահատման մեթոդների կիրառմամբ ներառական ինտեգրացիոն դասարաններում:

36. Հողված 24-ի 4-րդ մասի իրականացման համար մասնակից պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ վարձելու ներառական կրթության միջավայրում արդյունավետ աշխատելու հմտություններով, ժեստերի լեզվի և (կամ) Բրայլի որակավորված, կողմնորոշման և շարժունության գիտելիքներով վարչական, ուսուցչական և ոչ ուսուցչական անձնակազմ: Որակյալ և նվիրյալ դպրոցական կազմ ունենալը կարևոր է ներառական կրթության ներդրման և կայունության համար: Ներառման համար ըմբռնման և կարողությունների բացակայությունը միտում է մեծ խոչընդոտ: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ բոլոր ուսուցիչները անցել են ներառական կրթության վերապատրաստում և որ այդ վերապատրաստումները հիմնված են հաշմանդամության մարդու իրավունքների մոդելի վրա:

37. Մասնակից պետությունները պետք է ներդրումներ կատարեն և աջակցեն հաշմանդամություն ունեցող ուսուցիչների հավաքագրման և շարունակական կրթության գործում: Սա ներառում է ցանկացած օրենսդրական կամ քաղաքական խոչընդոտների հեռացում, որոնք պահանջում են թեկնածուներից բավարարել հատուկ բժշկական չափանիշներին և ուսուցիչների մասնակցության համար խելամիտ հարմարեցումների տրամադրում: Նրանց ներկայությունը կծառայի հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների խթանմանը՝ զբաղվելու ուսուցչությամբ, կրթական միջավայր կբերի յուրահատուկ փորձը և հմտությունները, կնպաստի խոչընդոտների վերացմանը և կծառայի որպես դերային մոդել:

38. Հողված 24-ի 5-րդ մասի իրականացման համար մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ կարողանում են օգտվել ընդհանուր երրորդային կրթությունից, մասնագիտական վերապատրաստումներից,

մեծահասակների կրթությունից և ցկյանս ուսուցումից առանց խտրականության և մյուսների հետ հավասար հիմունքներով: Կրթության այդ փուլերում վերաբերմունքային, ֆիզիկական, լեզվական, հաղորդակցական, ֆինանսական, իրավական և այլ խոչընդոտները պետք է նույնականացվեն և հեռացվեն ապահովելու հավասար մուտք: Հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ խտրականության չենթարկվելու համար պետք է տրամադրվեն խելամիտ հարմարեցումներ: Մասնակից պետությունները պետք է կառուցողական միջոցներ ընդունեն երրորդային կրթության ոլորտում ի նպաստ հաշմանդամություն ունեցող սովորողների:

III. Մասնակից պետությունների պարտավորություններ

39. Մասնակից պետությունները պետք է հարգեն, պաշտպանեն և կատարեն ներառական կրթության կարևոր բաղադրիչներից յուրաքանչյուրը՝ հասանելիությունը, մատչելիությունը, ընդունելիությունը և հարմարունակությունը: Հարգանքի պարտավորությունը պահանջում է խուսափել այնպիսի միջոցներից, որոնք խոչընդոտում են իրավունքի կիրառմանը, ինչպիսիք են օրենսդրությունը, որը բացառում է հաշմանդամություն ունեցող որոշ երեխաների կրթությունից կամ մատչելիության կամ խելամիտ հարմարեցումների մերժումը: Պաշտպանելու պարտավորությունը պահանջում է միջոցներ ձեռնարկել, որոնք երրորդ կողմերին թույլ չեն տալիս միջամտել իրավունքի կիրառմանը, օրինակ՝ ծնողներին, որոնք հրաժարվում են հաշմանդամություն ունեցող աղջիկներին դպրոց ուղարկել կամ մասնավոր հաստատություններին, որոնք խանգարման հիմքով չեն գրանցում հաշմանդամություն ունեցող անձանց: Կատարելու պարտականությունը պահանջում է միջոցներ ձեռնարկել, որոնք թույլ են տալիս հաշմանդամություն ունեցող անձանց օգտվել կրթության իրավունքից, օրինակ, ապահովելով կրթական

հաստատությունների մատչելիությունը և կրթական համակարգերի հարմարեցումը ռեսուրսների և ծառայությունների հետ:

40. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ հոդված 4-ի 2-րդ մասը մասնակից պետություններից պահանջում է ձեռնարկել միջոցներ իրենց ռեսուրսների առավելագույն չափով, և որտեղ անհրաժեշտ է, միջազգային համագործակցությամբ, այդ իրավունքների լիիրավ իրականացումը նվաճելու համար: Աստիճանաբար աճող իրականացումը նշանակում է, որ մասնակից պետություններն ունեն կոնկրետ և շարունակական պարտավորություն՝ հնարավորինս արագ և արդյունավետ կերպով շարժվել դեպի հոդված 24-ի լիարժեք իրականացումը: ¹² Սա համատեղելի չէ երկու կրթական համակարգերի պահպանման հետ՝ հիմնական կրթության համակարգի և հատուկ/տարանջատված կրթության համակարգի: Աստիճանաբար աճող իրականացումը պետք է դիտարկել Կոնվենցիայի ընդհանուր նպատակների հետ միասին, որը պետք է հստակ պարտավորություններ սահմանի մասնակից պետությունների համար՝ կապված իրավունքների լիարժեք իրականացման հետ: Նույն կերպ, պետությունները խրախուսվում են վերանայել կրթության բյուջետային հատկացումները, ներառյալ՝ բյուջեի միջոցների մի մասը տրամադրելով ներառական կրթության զարգացմանը: Այդ առումով ցանկացած միտմամբ ռեգրեսիվ միջոց չպետք է անհամաչափ ազդեցություն ունենա հաշմանդամություն ունեցող սովորողների վրա կրթության ցանկացած մակարդակում: ¹³

Դրանք պետք է լինեն միայն ժամանակավոր միջոցներ ճգնաժամային ժամանակահատվածում, պետք է լինեն անհրաժեշտ և համաչափ,

¹² Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն 3-ը (1990) մասնակից պետությունների պարտավորությունների վերաբերյալ, պարբ. 9:

¹³ Տե՛ս նույն տեղում:

ներառեն անհավասարությունների մեղմացման հնարավոր բոլոր միջոցները և չպետք է խտրական լինեն:¹⁴

41. Ա ս տ ի ճ ա ն ա բ ար կ ա տ ար ու մ ը չ ի վ ն ա ս ու մ ա յ ն պարտավորություններին, որոնք անհապաղ կիրառելի են: Ինչպես նշում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն իր ընդհանուր մեկնաբանություն 3-ում (1990) մասնակից պետությունների պարտավորությունների բնույթի վերաբերյալ՝ մասնակից պետությունները ունեն նվազագույն հիմնական պարտավորություն՝ ապահովելու առնվազն կրթության իրավունքի յուրաքանչյուր մասի նվազագույն էական մակարդակների իրագործումը:¹⁵ Հետևաբար, մասնակից պետությունները պետք է անհապաղ իրականացնեն հետևյալ հիմնական իրավունքները՝

(ա) Կրթության բոլոր ոլորտներում անխտրականությունը՝ ընդգրկելով խտրականության բոլոր միջազգայնորեն արգելված հիմքերը: Մասնակից պետությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց կրթությունից չբացառվելը և վերացնեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար արդյունավետ մասնակցության և հավասարության հասնելու համար կառուցվածքային խոչընդոտները:

Նրանք պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկեն իրավական, վարչական և խտրականության այլ ձևերը հեռացնելու համար, որոնք խոչընդոտում են ներառական կրթության հասանելիության իրավունքին: Կառուցողական գործողությունների ընդունումը չի համարվում կրթության հետ կապված անխտրականության իրավունքի

¹⁴ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի նամակն՝ ուղղված Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի մասնակից պետություններին, 2012 թվականի մայիսի 16:

¹⁵ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն 3:

խախտում այնքան ժամանակ, քանի դեռ նման միջոցները չեն հանգեցրել տարբեր խմբերի անհավասար կամ տարանջատված ստանդարտների պահպանմանը:

(բ) Խելամիտ հարմարեցումներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց կրթությունից չբացառվելը: Խելամիտ հարմարեցումների տրամադրման ձախողումը խտրականություն է հաշմանդամության հիմքով:

(գ) Պարտադիր և անվճար հիմնական կրթության հասանելիություն բոլորի համար: Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները՝ ներառման հիման վրա երաշխավորելու այդ իրավունքը հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների և երիտասարդների համար: Կոմիտեն կոչ է անում մասնակից պետություններին ապահովել որակյալ կրթության հասանելիությունն ու դրա կատարումը բոլոր երեխաների և երիտասարդների համար առնվազն 12 տարի ազատ, հանրային ֆինանսավորվող, ներառական և արդար սկզբունքով որակյալ նախնական և միջնակարգ կրթությունը, որից առնվազն ինը տարին պարտադիր է, ինչպես նաև ապահովել որակյալ կրթության հասանելիությունը կրթությունից դուրս մնացած երեխաների և երիտասարդների համար մի շարք եղանակներով, ինչպես նշված է «Կրթություն-2030» գործողությունների շրջանակում:

42. Մասնակից պետությունները պետք է ընդունեն և իրականացնեն կրթության ազգային ռազմավարություն, որը պարունակում է կրթության բոլոր փուլերում բոլոր սովորողների վերաբերյալ դրույթ հիմնված ներառման և հնարավորության հավասարության վրա: 24-րդ հոդվածի 1-ին կետում նշված կրթական նպատակները մասնակից պետությունների համար համարժեք պարտավորություններ են և,

հետևաբար, պետք է դիտարկվեն անմիջական կիրառության սկզբունքով:

43. Ինչ վերաբերում է միջազգային համագործակցության և Կայուն զարգացման նպատակ 4-ին և «Կրթություն-2030» գործողությունների շրջանակին, բոլոր երկկողմ և բազմակողմ համագործակցությունները պետք է նպատակաուղղված լինեն ներառական, արդար որակյալ կրթության զարգացմանը և խթանեն ցկայն ուսուցման հնարավորությունները բոլորի համար, ներառյալ կարողությունների զարգացման համար աջակցության, տեղեկությունների տարածման և փոխանակման լավագույն փորձի, հետազոտման, տեխնիկական և տնտեսական աջակցության և մատչելի և աջակցող տեխնոլոգիաների հասանելիության միջոցով: Հավաքած բոլոր տվյալները և կրթությանը տրամադրված բոլոր միջազգային օժանդակությունները պետք է ապահուցորացվեն խանգարմամբ: Նպատակ 4-ը իրականացնելու և ապացույցներ հավաքագրելու համար ներառական կրթության վերաբերյալ միջազգային համակարգման մեխանիզմի քննարկումը կնպաստի ավելի լավ քաղաքական երկխոսությանը և առաջընթացի մոնիտորինգին:

IV. Կոնվենցիայի այլ դրույթների հետ հարաբերություններ

44. Մասնակից պետությունները պետք է ճանաչեն մարդու բոլոր իրավունքների անքակտելիությունը և փոխկապակցվածությունը: Կրթությունն անբաժանելի է այլ իրավունքների լիարժեք և արդյունավետ իրականացման համար:¹⁶ Ընդ որում, ներառական կրթության իրավունքը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ իրականացվում են որոշակի այլ իրավունքներ: Ավելին, ներառական կրթության իրավունքը պետք է ամրապնդվի հասարակության շրջանում ներառական միջավայրի ստեղծմամբ: Այն

¹⁶ Տե՛ս նույն տեղում, ընդհանուր մեկնաբանություն 11 (1999) հիմնական կրթության համար գործողության պլանների մասին, ընդհանուր մեկնաբանություն 13:

պահանջում է հաշմանդամության մարդու իրավունքների մոդելի ընդունում, որը ճանաչում է հաշմանդամություն ունեցող անձանց բացառող և մարգինալիզացնող հասարակության խոչընդոտները հեռացնելու պարտավորությունը և ստորև նշված իրավունքների իրականացման համար միջոցներ ձեռնարկելու կարիքը:

45. Հոդվածը 5-ը ամրագրում է բոլոր անձանց օրենքի առաջ և օրենքով հավասար պաշտպանության սկզբունքը: Մասնակից պետությունները պետք է արգելեն հաշմանդամության հիմքով ցանկացած խտրականություն և հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրեն ցանկացած հիմքով խտրականությունից արդյունավետ և հավասար պաշտպանություն: Համակարգային և կառուցվածքային խտրականության վերացման և «օրենքից հավասար օգտվելն» ապահովելու համար, մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն կառուցողական գործողություններ, ինչպիսիք են՝ ճարտարապետական և հաղորդակցական կամ այլ խոչընդոտների հեռացումը հանրակրթությունից:

46. Հոդված 6-ը ճանաչում է, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթարկվում են բազմակի խտրականության և որ մասնակից պետությունները պետք է ընդունեն միջոցներ՝ ապահովելու նրանց իրավունքներից հավասար օգտվելը: Հատվող խտրականությունը և բացառումը զգալի խոչընդոտներ են հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներ կրթության իրականացման համար: Մասնակից պետությունները պետք է նույնականացնեն և հեռացնեն խոչընդոտները, ներառյալ գենդերային բռնությունը և հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների կրթության անկարևորությունը, և ձեռնարկեն հստակ միջոցներ ապահովելու համար, որ կրթության իրավունքը չի խախտվում գենդերի և (կամ) հաշմանդամության հիմքով խտրականության,

խարանի կամ նախապաշարմունքի պատճառով: Դասագրքերից և կրթական ծրագրից պետք է հեռացվեն գենդերային և (կամ) հաշմանդամության մասին վնասակար կարծրատիպերը: Կրթությունը առանցքային դեր ունի գենդերային ավանդական հասկացությունների դեմ պայքարում, որոնք պահպանում են հայրիշխանական և պատեռնալիստական հասարակական կառուցվածքը:¹⁷ Մասնակից պետությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող աղջիկների և կանանց կրթության և վերականգնման ծառայությունների հասանելիությունը և դրա պահպանումը որպես նրանց զարգացման, առաջխաղացման և հզորացման գործիքներ:

47. Հոդված 7-ը հաստատում է, որ հաշմանդամություն ունեցող երեխաներին առնչվող բոլոր գործողություններում երեխայի լավագույն շահը պետք է համարվի առաջնային: Լավագույն շահի հայեցակարգը նպատակ ունի ապահովել մարդու բոլոր իրավունքներից լիարժեք և արդյունավետ օգտվելը և երեխայի ամբողջական զարգացումը:¹⁸ Հաշմանդամություն ունեցող երեխայի լավագույն շահի որոշելու ցանկացած քայլում պետք է հաշվի առնվեն երեխայի սեփական տեսակետները և անհատական ինքնությունը, ընտանիքի պահպանումը, երեխայի խնամքը, պաշտպանությունը և անվտանգությունը, ցանկացած խոցելիություն և երեխայի առողջության և կրթության իրավունքը: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան հաստատում է, որ երեխայի լավագույն շահը պետք է լինի այն հիմքը, որի վրա սահմանվում են կրթական քաղաքականությունները և դրույթները: Հոդված 7-ի 3-րդ մասը նշում է, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն կարծիքն

¹⁷ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, «Concept note on the draft general recommendation on girls'/women's right to education» (2014):

¹⁸ Երեխայի իրավունքների մասին կոմիտեի, ընդհանուր մեկնաբանություն 14 (2013) երեխայի իր լավագույն շահերի առաջնային համարվելու իրավունքի վերաբերյալ

արտահայտելու իրավունք և որ իրենց վերաբերող բոլոր հարցերի վերաբերյալ տեսակետներին տրվում է տարիքին ու հասունությանը համապատասխան կշիռ մյուս երեխաներին հավասար հիմունքներով, և այդ իրավունքն իրականացնելու համար տրամադրվում է հաշմանդամությանը ու տարիքին համապատասխան աջակցություն: Երեխաների՝ իրենց կրթությանը մասնակցելու իրավունքի երաշխիքները պետք է հավասարապես կիրառվեն հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում իրենց ուսումնառության և անհատականացված կրթական պլաններում, դասարանային մանկավարժության շրջանակներում, դպրոցական խորհուրդների միջոցով, դպրոցական քաղաքականության և համակարգերի մշակման և ավելի լայն կրթական քաղաքականության մշակման գործում: ¹⁹

48. Հոդված 8-ը կոչ է անում միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ կարծրատիպերի, նախապաշարմունքների և վնասակար սովորույթների ուղղությամբ և բարձրացնել իրազեկվածությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն գործելակերպերին, որոնք ազդում են հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և ինտենսիվ աջակցության կարիք ունեցող անձանց վրա:

Կարծրատիպերը, նախապաշարմունքները և վնասակար սովորույթները խոչընդոտում են կրթության հասանելիությանը և կրթական համակարգում արդյունավետ սովորելուն:

Կոմիտեն նշում է այն գործելակերպը, երբ որոշ ծնողներ հանում են հաշմանդամություն ունեցող իրենց երեխաներին ներառական դպրոցներից իրազեկվածության պակասի և հաշմանդամության բնույթի ընկալման հիմքով:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, ընդհանուր մեկնաբանություն 12 (2009) երեխայի լավելու իրավունքի մասին:

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ ստեղծելու բազմազանության, համայնքային կյանքին մասնակցելու և ներգրավված լինելու մշակույթ և ընդգծելու ներառական կրթությունը որպես բոլոր ուսանողների (հաշմանդամություն ունեցող և չունեցող), ծնողների, ուսուցիչների և դպրոցի աշխատակազմերի, ինչպես նաև համայնքի և հասարակության համար որակյալ կրթության հասնելու միջոց: Մասնակից պետությունները պետք է ապահովեն մեխանիզմներ, որոնք կրթության համակարգի բոլոր մակարդակներում և ծնողների և լայն հասարակության շրջանում խթանում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքը: Քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունները պետք է ներգրավված լինեն իրազեկվածության բարձրացման բոլոր գործողություններում:

49. Հոդված 9-ը և 24-ը սերտորեն փոխկապակցված են: Մատչելիությունը նախապայման է հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք և հավասար մասնակցության համար: Հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող արդյունավետորեն օգտվել ներառական կրթության իրավունքից, առանց մատչելի կառուցված միջավայրի, ներառյալ դպրոցների և կրթության բոլոր այլ վայրերի, առանց մատչելի հանրային տրանսպորտի, ծառայությունների, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների: Ուսուցման եղանակները և մեթոդները պետք է մատչելի լինեն, և ուսուցումը պետք է կազմակերպվի մատչելի միջավայրում: Ամբողջ միջավայրը, որտեղ հաշմանդամություն ունեցող ուսանողները սովորում են, պետք է ձևավորվի այնպես, որպեսզի խթանի ներառումը: Ներառական կրթությունը նաև հզոր գործիք է մատչելիության և համընդհանուր դիզայնի խթանման համար:

50. Կոմիտեն հրավիրում է մասնակից պետություններին ուշադրությունը Օրենքի առջև հավասար ճանաչման մասին ընդհանուր մեկնաբանություն 1-ի (2014) վրա և ընդգծում է, որ ներառական կրթությունը ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց, մասնավորապես, հոգեկան կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց, հնարավորությամբ՝ արտահայտելու իրենց կամքը և նախընտրությունները: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ ներառական կրթությունը աջակցում է հաշմանդամություն ունեցող սովորողներին ամրապնդել իրավունակությունից օգտվելու իրենց ինքնավստահությունը՝ ապահովելով անհրաժեշտ աջակցություն կրթության բոլոր մակարդակներում, այդ թվում՝ ապագայում աջակցության անհրաժեշտության նվազեցման համար, եթե նրանք ցանկանում են:

51. Հաշմանդամություն ունեցող անձինք, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները կարող են անհամաչափ կերպով ենթարկվել բռնության և չարաշահումների, ներառյալ կրթական անձնակազմի կողմից ֆիզիկական և նվաստացուցիչ պատիժների, օրինակ, մյուսների կողմից զսպումների, առանձնացման և բուլիինգի գործածման միջոցով դպրոցում կամ ճանապարհին:

Հոդված 16-ի 2-րդ մասի իրագործման համար մասնակից պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց շահագործումից, բռնությունից և չարաշահումից, ներառյալ սեռական բռնությունից ազատությունը: Նման միջոցները պետք է տարիքի, գենդերի և հաշմանդամության առումով զգայուն լինեն: Կոմիտեն խորապես հաստատում է Երեխայի իրավունքների կոմիտեի, Մարդու իրավունքների կոմիտեի և Տնտեսական, սոցիալական և մշակութային

իրավունքների կոմիտեի առաջարկությունները, համաձայն որոնց մասնակից պետությունները պետք է արգելեն մարմնական պատժի բոլոր ձևերը և դատան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը բոլոր հաստատություններում, ներառյալ դպրոցներում, և ապահովեն արդյունավետ պատժամիջոցներ մեղավորների դեմ:²⁰ Առաջարկությունները քաջալերում են դպրոցներին և այլ կրթական հաստատություններին ներառել ուսանողներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող սովորողներին քաղաքականությունների, այդ թվում՝ մատչելի պաշտպանության մեխանիզմների մշակման գործընթացում ուղղված կարգապահական միջոցառումներին և ահաբեկչության դեմ պայքարին, այդ թվում՝ կիբերբուլիմինգին, որն աստիճանաբար ավելի է դառնում ուսանողների, հատկապես երեխաների կյանքի թափ առնող առանձնահատկությունը:

52. Ներառական կրթությունը պահանջում է հաշմանդամություն ունեցող անձանց համայնքում ապրելու և համայնքում ներառման և մասնակցության իրավունքի ճանաչում (հոդված 19): Այն նաև պահանջում է ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց ընտանեկան կյանքի, կամ, դրա բացակայության դեպքում, համայնքում այլընտրանքային խնամք ստանալու հավասար իրավունքը (հոդված 23): Մասնակից պետության հոգածության տակ գտնվող երեխաները, օրինակ՝ խնամատար ընտանիքներում կամ խնամքի տներում ապրող երեխաները, պետք է ապահովվեն ներառական կրթության իրավունքով և մասնակից պետության որոշումների բողոքարկման իրավունքով, որոնք ժխտում են ներառական կրթության իրավունքը: Հաշմանդամություն ունեցող

²⁰ Տե՛ս նույն տեղում: Ընդհանուր մեկնաբանություն 8 (2006) երեխայի մարմնական պատժից և այլ դատան և արժանապատվությունը նվաստացնող պատժից պաշտպանության իրավունքի վերաբերյալ

բազմաթիվ անձինք ապրում են երկարաժամկետ հաստատություններում առանց համայնքահեն ծառայությունների, այդ թվում՝ առանց կրթության, ընտանեկան կյանքի, համայնքային կյանքի, միավորման ազատության, բռնությունից պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքների: Տեղական համայնքում ներառական կրթության ներդրումը պետք է տեղի ունենա հաշմանդամություն ունեցող անձանց ինստիտուցիոնալացման գործելակերպերը վերջ դնելու ռազմավարական հանձնառության հետ մեկտեղ (տես ստորև՝ պարբերություն 66): Մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն այն հանգամանքը, որ ներառական կրթության իրավունքի իրականացումը կխթանի ուժերի, հմտությունների և ունակությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց՝ կիրառելու, օգտվելու և նպաստելու համար տեղական համայնքներին:

53. Ներառական կրթության արդյունավետ իրականացման համար պետք է երաշխավորվի հաշմանդամություն ունեցող անձանց անկախ հիմունքներով անհատական շարժունությունը (հոդված 20):

Այն դեպքերում, երբ ուղևորափոխադրումը մատչելի չէ, և որտեղ չկան անհատական օգնականներ ուսումնական հաստատություններում աջակցելու համար, հաշմանդամություն ունեցող անձինք, մասնավորապես կույր և տեսողական խանգարումներ ունեցող անձինք, պետք է վերապատրաստվեն շարժունության հմտություններով անկախության խթանման համար: Մասնակից պետությունները պետք է նաև հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն ընձեռեն ձեռք բերել շարժունության աջակցող միջոցներ հասանելի գնով:

54. Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության բարձրագույն ստանդարտներից օգտվելու իրավունքի իրականացումը (հոդված 25)

անբաժանելի է կրթությունից լիարժեք օգտվելու հնարավորությունից: Կրթական միջավայրում մասնակցելու և արդյունավետորեն սովորելու ունակությունը լրջորեն խափանվում է, եթե չկա առողջության կամ համապատասխան բուժման և խնամքի մատչելիություն: Մասնակից պետությունները պետք է ստեղծեն գենդերային առումով զգայուն առողջապահական, հիգիենայի և սնուցման ծրագրեր, որոնք ընդգրկված են կրթական ծառայություններում և թույլ են տալիս առողջության բոլոր կարիքների շարունակական մոնիտորինգ իրականացնել: Նման ծրագրերը պետք է մշակվեն ունիվերսալ դիզայնի և մատչելիության սկզբունքների հիման վրա, պետք է ապահովեն դպրոցական բուժքույրերի կանոնավոր այցելությունները և առողջապահական սկրինինգները, կառուցեն համայնքային համագործակցություն: Հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով պետք է ունենան տարիքին համապատասխան, համապարփակ և ներառական սեռականության կրթության հնարավորություն՝ հիմնված գիտական ապացույցների և մարդու իրավունքների ստանդարտների վրա մատչելի ձևաչափերով:

55. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցներ կրթական համակարգում աբիլիտացիայի և վերականգնման ծառայություններ տրամադրելու համար, այդ թվում՝ առողջապահական, մասնագիտական, ֆիզիկական, սոցիալական, խորհրդատվական և այլ ծառայություններ (հոդված 26): Այդ ծառայությունները պետք է սկսվեն հնարավորինս վաղ փուլում, հիմնված լինեն ուսանողի ուժեղ կողմերի բազմադիսցիպլինար գնահատման վրա և աջակցեն առավելագույն անկախությանը, ինքնավարությանը, արժանապատվության նկատմամբ հարգանքին, լիարժեք ֆիզիկական, մտավոր, սոցիալական և մասնագիտական կարողություններին և ներառմանը և կյանքի բոլոր ոլորտներում մասնակցության ապահովմանը: Կոմիտեն ընդգծում է համայնքահեն

վերականգնման զարգացմանն աջակցելու կարևորությունը, որն ուղղված է վաղ նույնականացմանը և խրախուսում է հավասարակիցների աջակցությունը:

56. Որակյալ ներառական կրթությունը պետք է պատրաստի հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային կյանքի համար ազատ աշխատաշուկայում մասնակցելու համար՝ անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և վստահության ձեռքբերման միջոցով և ազատ, ներառական և մատչելի աշխատանքային միջավայրում (հոդված 27):

57. Քաղաքական և հասարակական կյանքում լիարժեք մասնակցությունը ամրապնդվում է ներառական կրթության իրավունքի իրականացման միջոցով: Ուսումնական ծրագիրը բոլոր ուսանողների համար պետք է ներառի քաղաքացիության թեման և ինքնաադվոկացիայի և ինքնաներկայացման հմտությունները՝ որպես քաղաքական և հասարակական գործընթացներում մասնակցության հիմնարար հիմք:

Հանրային հարցերը ներառում են ուսանողական կազմակերպությունների (ուսանողական միավորումներ) ձևավորում և դրանցում մասնակցություն, և մասնակից պետությունները պետք է նպաստեն այնպիսի միջավայրերի ստեղծմանը, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են ձևավորել, միանալ և արդյունավետ և լիարժեք մասնակցել այդ ուսանողական կազմակերպություններին իրենց նախընտրած հաղորդակցման ձևերի և լեզուների միջոցով (հոդված 29):

58. Մասնակից պետությունները պետք է հեռացնեն խոչընդոտները և խթանեն հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառական հնարավորությունների հասանելիությունը և մատչելիությունը դպրոցական համակարգում և արտածրագրային

գործողություններում, ներառյալ այլ կրթական միջավայրերում (հոդված 30):²¹ Կրթական միջավայրում պետք է լինեն անհրաժեշտ միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային կյանքի հասանելիության հնարավորությունների ապահովման և ստեղծագործական, գեղագիտական և մտավոր ներուժի ստեղծման և օգտագործման համար և ոչ միայն սեփական շահի, այլ նաև հասարակության զարգացման համար: Նման միջոցները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ մշակութային և լեզվական ինքնությունը, ներառյալ ժեստերի լեզուները և խուլերի մշակույթը, ճանաչված են:

V. Ազգային մակարդակում իրականացումը

59. Կոմիտեն նշել է մի շարք մարտահրավերներ, որոնց բախվում են մասնակից պետությունները հոդված 24-ն իրականացնելիս: Հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար ներառական կրթական համակարգի ներդրման և կայունացման համար հետևյալ միջոցները պետք է իրականացվեն ազգային մակարդակում:

60. Հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մյուսների բոլոր մակարդակներում կրթության համար պատասխանատու պետք է լինի կրթության նախարարությունը: Շատ երկրներում հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթությունը գտնվում է սոցիալական ապահովության կամ առողջապահության նախարարությունների պատասխանատվության ներքո, ինչը, ի թիվս այլոց, հանգեցրել է կրթության հիմնական օրենսդրությունից, քաղաքականություններից, պլանավորման և ռեսուրսների բաշխման գործընթացներից բացառմանը, մեկ շնչի հաշվով հաշմանդամություն ունեցող անձանց կրթության ուղղված ներդրումների ցածր մակարդակին, ներառական կրթությանն աջակցելու համար

²¹ Տես նույն տեղում, Ընդհանուր մեկնաբանություն 17 (2013)

համապարփակ և փոխկապակցված կառույցների բացակայությունը, կրթական համակարգում ընդգրկվածություն, պահպանման և ձեռքբերումների վերաբերյալ ինտեգրված տվյալների հավաքագրման բացակայությունը և ուսուցիչներին ներառական կրթության համար պատրաստելու ձախողմանը: Մասնակից պետությունները պետք է շտապ միջոցներ ձեռնարկեն՝ հաշմանդամություն ունեցող սովորողների կրթությունը կրթության նախարարության իրավասության ներքո դնելու համար:

61. Մասնակից պետությունները պետք է ապահովեն ներառական կրթության համապարփակ և միջոլորտային պարտավորություն կառավարությունում: Ներառական կրթությունը չի կարող իրականացվել կրթության նախարարությունների կողմից մեկուսացման պայմաններում: Համապատասխան բոլոր նախարարությունները և հանձնաժողովները, որոնք ընդգրկում են Կոնվենցիայի հիմնարար հոդվածները, պետք է պարտավորություններ ստանձնեն ներառական կրթության համակարգում և համապատասխանեցնեն ներառական կրթության համակարգի վերաբերյալ իրենց պատկերացումները՝ նվաճելու ինտեգրված մոտեցում և աշխատելու միասին բաժանված օրակարգի համապատասխան: Ներգրավված բոլոր նախարարությունների համար պետք է գործարկվեն հաշվետվողականության միջոցներ՝ նման պարտավորությունների կատարման նպատակով: Պետք է նաև համագործակցություն ձևավորվի ծառայություններ մատուցողների, հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների, լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, տեղական իշխանությունների, ուսանողական ասոցիացիաների և ֆեդերացիաների, համալսարանների և ուսուցիչների կրթական քոլեջների հետ:

62. Մասնակից պետությունները յուրաքանչյուր մակարդակում պետք է իրականացնեն կամ ներդնեն օրենսդրությունն հաշվի առնելով հաշմանդամության մարդու իրավունքների մոդելը, որը լիովին համապատասխանում է հոդված 24-ին: Կոմիտեն հիշեցնում է, որ հոդված 4-ի 5-րդ մասը պահանջում է դաշնային պետություններից ապահովել 24-րդ հոդվածի կիրառումն առանց սահմանափակումների կամ բացառությունների պետության բոլոր մասերում:

63. Պետք է ներդրվի ներառական կրթության համար համապարփակ և համակարգված օրենսդրական և քաղաքական դաշտ՝ դրա իրականացման համար հստակ և համապատասխան ժամանակային շրջանակի և խախտումների համար պատժամիջոցների հետ միասին: Այդպիսի շրջանակները պետք է անդրադառնան կրթական բոլոր հաստատություններում բոլոր սովորողների համար ճկունության, բազմազանության և հավասարության հարցերին, ինչպես նաև նույնականացնեն կառավարության պարտավորությունները բոլոր մակարդակներում: Հիմնական տարրերը պետք է ներառեն՝

(ա) Համապատասխանություն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին,

(բ) Ներառման հստակ սահմանումը և կոնկրետ նպատակները, որոնք ձգտում են հասնել բոլոր կրթական մակարդակներում: Ներառման սկզբունքներն ու գործելակերպերը պետք է դիտարկվեն որպես բարեփոխման անբաժանելի մաս, և ոչ թե որպես լրացուցիչ ծրագիր,

(գ) Ներառական կրթության նյութական իրավունքը՝ որպես օրենսդրական շրջանակի առանցքային տարր: Դրույթները, որոնք որոշ ուսանողների սահմանում են որպես «սովորելու համար անընդունակ», օրինակ, պետք է վերացվեն:

(դ) Հաշմանդամություն ունեցող և չունեցող ուսանողների համար հիմնական կրթական համակարգում սովորելու ներառական հնարավորությունների հասանելիության միևնույն իրավունքի և անհատ սովորողների համար բոլոր մակարդակներում անհրաժեշտ ծառայությունների երաշխիք:

(ե) Բոլոր նոր դպրոցները պետք է նախագծվեն և կառուցվեն հաշվի առնելով համընդհանուր դիզայնի սկզբունքները մատչելիության չափանիշների միջոցով, ինչպես նաև գոյություն ունեցող դպրոցների հարմարեցման ժամանակացույցի հետ միասին համաձայն Կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն 2-ի: Այս տարրը իրականացնելու համար պետական գնումների կիրառումը խրախուսվում է:

զ) Համապարփակ որակի ստանդարտների ներդրումը ներառական կրթության և հաշմանդամության առումով ներառական մոնիտորինգի մեխանիզմների համար՝ հետևելու՝ բոլոր մակարդակներում իրականացման առաջընթացին և համոզվելու, որ քաղաքականությունները և ծրագրերը իրականացվում են և կատարվել են անհրաժեշտ ներդրումներ:

(է) մոնիտորինգի մատչելի մեխանիզմների ներդրումը, ապահովելու համար քաղաքականության իրականացման և անհրաժեշտ ներդրումների ապահովումը:

(ը) Խելամիտ հարմարեցումները՝ ներառմանը աջակցելու կարիքի ճանաչում՝ հիմնված մարդու իրավունքների ստանդարտների վրա, այլ ոչ թե ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա, այնպես էլ խելամիտ հարմարեցումների չկատարման համար պատժամիջոցների կիրառմամբ:

(թ) ներառական կրթության վրա ազդեցություն ունենալու ներուժով բոլոր օրենսդրություններում հստակ շեշտադրումը, որ ներառումը կոնկրետ նպատակ է:

(ժ) վաղ նույնականացման, գնահատման և աջակցության հետևողական շրջանակ, որն անհրաժեշտ է հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների ընդլայնման համար ներառական կրթական միջավայրում:

(ի) Տեղական իշխանությունների պարտավորությունը նախատեսել և ապահովել ներառական հաստատություններում և դասարաններում բոլոր սովորողներին, ներառյալ հաշմանդամություն ունեցող սովորողներին մատչելի ձևաչափերով և եղանակներով և հաղորդակցության միջոցներով, ներառյալ ամենահամապատասխան լեզուներով,

(լ) Օրենսդրություն, որը երաշխավորում է հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների լաված լինելու և կարծիք ունենալու իրավունքը կրթական համակարգում, ներառյալ դպրոցական խորհուրդների, կառավարման մարմինների, տեղական և ազգային կառավարությունների և կրթության վերաբերյալ որոշումները վիճարկելու և բողոքարկելու մեխանիզմի միջոցով:

(խ) Բոլոր շահագրգիռ կողմերի, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների, տարբեր գործակալությունների, զարգացման կազմակերպությունների, ոչ կառավարական կազմակերպությունների և ծնողների կամ խնամակալների միջև համագործակցության ստեղծումը և համակարգումը:

64. Օրենսդրությունը պետք է ապահովված լինի կրթության ոլորտի պլանով, որը մշակվել է հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, կազմակերպությունների կողմից և մանրամասնի ներառական կրթության համակարգի իրականացման գործընթացը: Այդ դեպքում պետք է ընդգրկվեն ժամանակացույց և չափելի նպատակներ, ներառյալ ապահովի հետևողականության մեխանիզմներ: Այդ պլանը պետք է հիմնված լինի ներառական կրթության վերաբերյալ ներկա իրավիճակի համապարփակ վերլուծության վրա՝ հետագա առաջընթացի գնահատման համար նախնական պարամետրերի ապահովում, ներառյալ՝ ներկա բյուջետային հատկացումների մասին տվյալները, տվյալների հավաքագրման մեթոդները որակը, դպրոցից դուրս մնացած երեխաների թիվը, հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողների և մասնակից պետության մտահոգությունները:

65. Մասնակից պետությունները պետք է ներդնեն անկախ, արդյունավետ, մատչելի, թափանցիկ, անվտանգ և կիրառելի բողոքարկման մեխանիզմներ և իրավական միջոցներ կրթության իրավունքի խախտման դեպքում: Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է ունենան արդարադատության համակարգի մատչելիություն, որը հասկանում է ինչպես պետք է աշխատել հաշմանդամություն ունեցող անձանց հետ և գիտի ինչպես պետք է գործել հաշմանդամության հիմքով պահանջների դեպքում: Մասնակից պետությունները պետք է նաև ապահովեն, որ կրթության իրավունքի մասին տեղեկությունը և տեղեկությունները, թե ինչպես պետք է վարվել այդ իրավունքի ժխտման կամ խախտման դեպքում, լայնորեն տարածված և հրապարակված են հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում իրենց ներկայացնող կազմակերպությունների ներգրավմամբ:

66. Ներառական կրթությունը անհամատեղելի է ինստիտուցիոնալացման հետ: Մասնակից պետությունները պետք է ներգրավվեն հաշմանդամություն ունեցող անձանց ապահովագրության լավ պլանավորված և կառուցված գործընթացներում: Այս գործընթացները պետք է ընդգրկեն վերահսկվող անցումային շրջանը՝ դրա որոշակի տևողության սահմանմամբ, համայնքակեն ծառայությունների զարգացման օրենսդրական պահանջի ներկայացումը, համայնքակեն ծառայությունների աջակցությանը և հզորացանն ուղղված միջոցառումներին շրջանակների ներկայացումը և ֆոնդերի վերաբաշխումը, ընտանիքներին տրամադրվող աջակցությունը, հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին, ներկայացնող կազմակերպությունների հետ, ինչպես նաև ծնողների կամ խնամակալների հետ համագործակցությունը և խորհրդակցությունները:

Ապահովագրությանը սպասելով հաստատություններում խնամք ստացող անձինք պետք է անհապաղ ունենան ներառական կրթության հասանելիություն՝ համայնքներում ներառական ակադեմիական ինստիտուտների հետ կապելու միջոցով:

67. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կարող է արժեքավոր լինել վաղ մանկական միջամտությունը, որը նախագծված է ամրապնդելու իրենց կրթությանից օգտվելու ունակությունը և նպաստում է կրթական համակարգի մասնակցությանը: Բոլոր նման միջամտությունները պետք է երաշխավորեն երեխայի արժանապատվության և ինքնավարության նկատմամբ հարգանքը: Համաձայն թվականի Կայուն զարգացման 2030 օրակարգի, ներառյալ Կայուն զարգացման նպատակ 4-ը, մասնակից պետությունները պետք է ապահովեն վաղ մանկական զարգացման, խնամքի և

նախադպրոցական կրթության հասանելիությունը, հաշմանդամություն ունեցող երեխաների խնամողների երեխաների ծնողների և խնամակալներին տրամադրվող աջակցության և վերապատրաստումների տրամադրման հետ միասին: Հաշմանդամություն ունեցող երեխաներն ավելի հակված են սահուն անցում կատարել նախադպրոցական կրթությունից հիմնական ներառական կրթության հաստատություններ, եթե նույնականացվել են և նրանց տրամադրվել է աջակցություն վաղ փուլում: Մասնակից պետությունները պետք է ապահովեն բոլոր համապատասխան նախարարությունների, իշխանությունների և մարմինների միջև համակարգում, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց և այլ ոչ կառավարական գործընկերների միջև:

68. 31-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է հավաքագրեն համապատասխան ապախոշորացված տվյալներ՝ ձևավորելու քաղաքականություններ, պլաններ և ծրագրեր՝ կատարելու 24-րդ հոդվածի իրենց պարտավորությունները: Նրանք պետք է միջոցներ ներդնեն՝ հաշվի առնելով տարբեր խանգարումներ ունեցող անձանց տարածվածության վերաբերյալ ճշգրիտ տվյալների բացակայությունը, ինչպես նաև կրթության հասանելիության, մշտականության և առաջընթացի, խելամիտ հարմարեցումների ապահովման և դրանց հետ կապված արդյունքների վերաբերյալ բավարարող որակյալ հետազոտությունների և տվյալների բացակայությունը: Մարդահամար, հարցումներ և վարչական տվյալներ, ներառյալ կրթության կառավարման տեղեկատվական համակարգից ստացված տվյալները, պետք է պարունակեն տեղեկություններ հաշմանդամություն ունեցող ուսանողների մասին, ներառյալ նրանց, որոնք դեռևս ապրում են հաստատություններում: Մասնակից պետությունները պետք է նաև հավաքագրեն ապախոշորացված տվյալներ և ապացույցներ այն արգելքների

վերաբերյալ, որոնք խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը, մնալը և առաջխաղացումը որակյալ կրթության մեջ, որպեսզի թույլ տան ձեռնարկել այդպիսի խոչընդոտների վերացման արդյունավետ միջոցներ: Ռազմավարությունները պետք է ընդունվեն հաղթահարելու ստանդարտ քանակական և որակական տվյալների հավաքման մեխանիզմներից հաշմանդամություն ունեցող անձանց բացառումը, այդ թվում, երբ դա ծագում է ծնողների դժկամությունից՝ ընդունելու հաշմանդամություն ունեցող երեխայի գոյությունը, ծննդյան գրանցման բացակայությունը և հաստատություններում անտեսանելիությունը:

69. Մասնակից պետությունները պարտավոր են բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ ներդնել կրթական ոլորտի պլանի և ոլորտային ծրագրերի մշակման համար՝ աջակցելու ներառական կրթության իրականացմանը՝ համահունչ առաջխաղացման սկզբունքին: Մասնակից պետությունները պետք է բարեփոխեն իրենց կառավարման համակարգերը և ֆինանսավորման մեխանիզմները՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց կրթության իրավունքը: Նրանք պետք է նաև հատկացնեն բյուջե՝ օգտագործելով մեխանիզմները, որոնք առկա են պետական գնումների գործընթացով և մասնավոր հատվածի հետ գործընկերության միջոցով: Այս հատկացումներն պետք է առաջնահերթ համարեն, մասնավորապես, սահմանափակ ժամանակահատվածում գոյություն ունեցող ուսումնական հաստատությունների մատչելիությունը ապահովումը, ներառական կրթության ուսուցիչների համար ներդրումներ կատարելը, խելամիտ հարմարեցումները հասանելի դարձնելը, դպրոցին մատչելի տրանսպորտով ապահովելը, անհրաժեշտ և մատչելի դասագրքերի հասանելիությունը ապահովելը, ուսուցման և սովորելու նյութերը, աջակցող տեխնոլոգիաների և ժեստերի լեզվի տրամադրումը և

խարանին և խտրականությունն ուղղված իրազեկվածության բարձրացման ծրագրերի իրականացումը, հատկապես կրթական հաստատություններում բուլիինգը:

70. Կոմիտեն կոչ է անում մասնակից պետություններին ռեսուրսներ առանձնացված միջավայրերից տանել ներառական միջավայրեր: Մասնակից պետությունները պետք է մշակեն ֆինանսավորման մոդելը, որը ռեսուրսներ և խթաններ են հատկացնում ներառական կրթական միջավայրին տրամադրելու հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ աջակցությունը:

Ֆինանսավորման առավել համապատասխան մոտեցման որոշումը տեղի է ունենալու հիմնականում գոյություն ունեցող կրթական միջավայրի ազդեցության ներքո և հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող պոտենցիալ սովորողների կարիքները:

71. Պետք է նախաձեռնել նախադպրոցական, առաջնային, երկրորդային, երրորդային և մասնագիտական կրթության մակարդակների բոլոր ուսուցիչներին կրթելու գործընթացը, որպեսզի նրանց տրամադրեն հիմնական ունակություններ և արժեքներ, որոնք անհրաժեշտ են ներառական կրթական միջավայրում աշխատելու համար: Նման գործընթացը պահանջում է հարմարեցում ինչպես նախնական, այնպես էլ վերապատրաստման փուլում՝ հնարավորինս կարճ ժամանակահատվածում համապատասխան հմտությունների մակարդակին հասնելու և ներառական կրթական համակարգի անցմանը նպաստելու համար: Բոլոր ուսուցիչներին պետք է անցնեն միավոր/մոդուլներ՝ նրանց պատրաստելու ներառական միջավայրերում աշխատելուն, ինչպես նաև գործնական փորձառական ուսուցման հաստատություններում, որտեղ նրանք կարող են կառուցել հմտություններ և վստահություն ներառման տարբեր մարտահրավերների լուծման միջոցով: Ուսուցիչների կրթության

հիմնական բովանդակությունը պետք է անդրադառնա մարդկային բազմազանության, աճի և զարգացման, հաշմանդամության մարդու իրավունքների մոդելին և ներառական մանկավարժության հիմնական հասկացություններին, ինչը թույլ է տալիս ուսուցիչներին նույնականացնել ուսանողի ֆունկցիոնալ ունակությունները (ուժերը, ունակությունները և ուսումնառության ոճերը) ապահովելու նրանց մասնակցությունը ներառական կրթական միջավայրերում: Ուսուցիչները կրթությունը պետք է անդրադառնա լրացուցիչ և այլընտրանքային եղանակների, հաղորդակցության միջոցների և ձևաչափերի կիրառմանը, ինչպիսիք են՝ բրայլը, մեծ տպագրությունը, մատչելի մուլտիմեդիան, հեշտ ընթերցվող, պարզ լեզվով տարբերակները, ժեստերի լեզուն և խուլերի մշակույթը, կրթական տեխնիկները և նյութերը՝ աջակցելու հաշմանդամություն ունեցող անձանց: Բացի դրանից, ուսուցիչները գործնական ուղղորդման և աջակցություն կարիք ունեն, մասնավորապես՝ անհատականացված հրահանգավորման տրամադրման, միևնույն բովանդակության համար տարբեր ուսուցման մեթոդներով յուրաքանչյուր անձի եզակի կարողություններին և ուսումնառության ոճերին «արձագանքելու» կիրառություն, անհատական կրթական պլանների մշակում և կիրառում՝ աջակցելու առանձնահատուկ կրթական պահանջմունքներին, և մանկավարժական ներդրումը, որը կենտրոնացած է ուսանողների կրթական նպատակների վրա:

72. Ներառական կրթությունը պահանջում է ուսումնական հաստատություններում և բոլոր մակարդակներում ուսուցիչների աջակցություն և նրանց համար ռեսուրսային համակարգ: Նման համակարգը կարող է ներառել հարևան կրթական հաստատությունների, ներառյալ համալսարանների հետ համագործակցությունը, համագործակցային պրակտիկաների, ներառյալ թիմային ուսուցման, ուսումնական խմբերի, ուսանողների

գնահատման համատեղ գործընթացների, հավասարակիցների աջակցման և փոխանակման այցելությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ գործընկերության խթանում:

Հաշմանդամություն ունեցող աշակերտների ծնողներն ու խնամակալները կարող են, անհրաժեշտության դեպքում, հանդես գալ որպես գործընկերներ ուսումնական ծրագրերի, ներառյալ անհատականացված կրթական պլանների, մշակման և իրականացման գործընթացում: Նրանք կարող են խորհրդատուի կարևոր դեր ստանձնել և աջակցել ուսուցիչներին անհատ ուսանողներին աջակցելու հարցում, սակայն այն երբեք չպետք է դառնա նախադպրոցական կրթություն ստանալու նախապայման:

Մասնակից պետությունները պետք է օգտվեն ուսուցիչների աջակցության բոլոր հնարավոր աղբյուրներից՝ ընդգրկելով հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպություններին, հաշմանդամություն ունեցող սովորողներին և տեղական համայնքի անդամներին, որոնք կարող են զգալիորեն նպաստել հավասարակիցների մենթորինգի, համագործակցության և խնդիրների լուծման ձևերով: Նրանց ներգրավվածությունը լրացուցիչ ռեսուրս է հանդիսանում դասարանում և ծառայում է տեղական համայնքների հետ կապերի հաստատմանը՝ վերացնելով խոչընդոտները և դարձնելով ուսուցիչներին հաշմանդամություն ունեցող ուսանողների ուժերի և պահանջմունքների նկատմամբ ավելի արձագանքող և զգայուն:

73. Իշխանությունները բոլոր մակարդակներում պետք է ունենան ներառական կրթությանն աջակցելու համար օրենքները, քաղաքականությունները և ծրագրերն իրականացնելու կարողություն, նվիրում և ռեսուրսներ: Մասնակից պետությունները պետք է ապահովեն վերապատրաստումների մշակումը և իրականացումը

տեղեկացնելու բոլոր համապատասխան մարմիններին օրենքով նախատեսված իրենց պարտավորությունների մասին և բարձրացնելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին հատուկությունները, գիտելիքները և պատկերացումները:

Ներառական կրթական քաղաքականության և գործելակերպի իրականացման համար անհրաժեշտ հատուկությունները, գիտելիքներն ու հասկացությունները ներառում են ներառական կրթության իրավունքի և դրա նպատակների հայեցակարգի ընկալումը, համապատասխան միջազգային և ազգային օրենսդրության և քաղաքականության իմացությունը, ներառական կրթության տեղական պլանների մշակումը, համագործակցությունը և գործընկերությունը, տեղական ուսումնական հաստատությունների օժանդակությունը, ուղղորդումը և վերահսկումը, մոնիտորինգը և գնահատումը:

74. Որակյալ ներառական կրթությունը պահանջում է ուսանողների առաջընթացի գնահատում և մոնիտորինգ, որը հաշվի է առնում հաշմանդամություն ունեցող ուսանողների առջև ծառայած խոչընդոտները:

Գնահատման ավանդական համակարգերը, որոնք օգտագործում են ստանդարտացված ձևաչափերումների թեստային միավորները որպես ուսանողների և դպրոցների հաջողության միակ ցուցանիշ, կարող են բացասաբար անդրադառնալ հաշմանդամություն ունեցող ուսանողների համար: Շեշտադրումը պետք է լինի լայն նպատակների նկատմամբ անհատական առաջընթացի վրա: Համապատասխան ուսուցման մեթոդաբանության, աջակցության և հարմարեցումների միջոցով, ամբողջ կրթական ծրագիրը կարող է համապատասխանեցվել բոլոր ուսանողների կարիքներին, ներառյալ նրանց, որոնք հաշմանդամություն ունեն: Ուսանողների գնահատման ներառական

համակարգը կարող է ուժեղացվել անհատականացված աջակցության համակարգերի միջոցով:

75. Հոդված 33-ի համաձայն և ներառական կրթության համակարգի ստեղծման միջոցով կրթության իրավունքի իրականացման առաջխաղացումը չափելու նպատակով մասնակից պետությունները պետք է մշակեն կառուցվածքային, գործընթացային և արդյունքների ցուցիչներով մոնիտորինգի շրջանակ և յուրաքանչյուր ցուցիչի համար հատուկ հենանիշեր և թիրախներ, որոնք համապատասխանում են Կայուն զարգացման 4-րդ նպատակին: 22 Հաշմանդամություն ունեցող անձինք իրենց ներկայացնող կազմակերպությունների միջոցով պետք է ներգրավվեն ինչպես ցուցիչների որոշման, այնպես էլ տվյալների և վիճակագրության հավաքագրման գործընթացում: Կառուցվածքային ցուցիչները պետք է չափեն ներառական կրթության խոչընդոտները և չսահմանափակվեն միայն խանգարման մասով ապախոչորացված տվյալների հավաքագրմամբ: Գործընթացային ցուցիչները, ինչպիսիք են ֆիզիկական միջավայրի մատչելիության փոփոխությունը, կրթական ծրագրերի ադապտացիան կամ ուսուցիչների վերապատրաստումը, հնարավորություն կտան վերահսկել անցման առաջընթացը: Պետք է նաև հաստատել արդյունքների ցուցիչները, ինչպիսիք են ներառական ուսումնական միջավայրում հաշմանդամություն ունեցող ուսանողների տոկոսը, որոնք անցնում են վերջնական պաշտոնական սերտիֆիկացում, կամ միջնակարգ կրթություն ստացած հաշմանդամություն ունեցող սովորողների տոկոսը:

Մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն նաև կրթության որակի գնահատման հնարավորությունը, օրինակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից առաջարկվող հինգ չափորոշիչների համաձայն՝ իրավունքների նկատմամբ հարգանքը, արդարությունը, համապատասխանությունը,

22 Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ, Մարդու իրավունքների ցուցիչներ. գնահատման և կիրառման ուղեցույց, Նյու Յորք, Ժնև, 2012 թ.

պատշաճությունը, արդյունավետությունը և արգասաբերությունը: Կարելի է նաև քննարկել կառուցողական գործողությունների միջոցների, այդ թվում՝ քվտանների կամ խթանների, մոնիտորինգը:

76. Կոմիտեն նշում է շատ երկրներում մասնավոր կրթության աճը: Մասնակից պետությունները պետք է ճանաչեն, որ ներառական կրթության իրավունքը տարածվում է բոլորի, այլ ոչ թե միայն պետական մարմինների կողմից տրամադրվող կրթության վրա: Մասնակից պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որոնք պաշտպանում են երրորդ կողմերի իրավունքները, այդ թվում՝ բիզնես սեկտորի:

Ինչ վերաբերում է կրթության իրավունքին նման միջոցները պետք է անդրադառնան ներառական կրթության տրամադրման երաշխավորման պարտավորությանը և, անհրաժեշտության դեպքում, օրենսդրության և կարգավորումների, մոնիտորինգի, վերահսկողության, կիրառման և քաղաքականության ընդունման ապահովմանը՝ որոշելու, թե ինչպես բիզնես ձեռնարկությունները կարող են ազդել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներից արդյունավետ օգտվելու և կիրառելու վրա: Կրթական հաստատությունները, ներառյալ մասնավոր կրթական հաստատությունները և ձեռնարկությունները, չպետք է գանձեն լրացուցիչ վճարներ մատչելիության և (կամ) խելամիտ հարմարեցման ապահովման համար: